«Էյչ Էներջի Սոլյուշնս» ՍՊԸ

Ֆինանսական հաշվետվություններ և
անկախ աուդիտորի եզրակացություն
2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

Հունիս 2026
Երևան

Բովանդակություն

3	Անկախ աուդիտորի եզրակացություն
6	Համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն
7	Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն
8	Դրամական հոսքերի մասին հաշվետվություն
9	Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն
10	Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունների ցանկ
11	Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

Ընկերության գտնվելու վայրը՝	Հայաստանի Հանրապետություն
Իրավական ձևը՝	Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
Հիմնական գործունեության նկարագիրը՝	Կազմակերպության գործունեության բնույթը ներկայացված է Ծանոթագրություն 1-ում
Գլխավոր տնօրեն՝	Եղիազար Բաղդասարյան

Tel: +374 60 528899
E-mail: bdo@bdoarmenia.am
www.bdoarmenia.am

23/6, Davit Anhaght Str.,
5th Floor, office 7
Yerevan, Armenia

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ներկայացվում է **«Էյչ Էներջի Սոլյուշնս»** ՍՊԸ-ի մասնակիցներին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել **«Էյչ Էներջի Սոլյուշնս»** ՍՊԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի մասին, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, որոնք ներառում են հաշվապահական հաշվառման քաղաքականության էական մասերը և այլ բացատրական տեղեկատվություն:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում Ընկերության ֆինանսական վիճակը 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքը և դրամական հոսքերը՝ Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների (ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտներ) համաձայն:

Կարծիքի հիմքեր

Մենք աուդիտն իրականացրել ենք Աուդիտի Միջազգային Ստանդարտներին (ԱՄՍ-ներին) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում:

Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի միջազգային կանոնագրքի (ներառյալ Անկախության Միջազգային Ստանդարտները) (ՀԷՄՍԽ կանոնագիրք), և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտի նկատմամբ կիրառելի էթիկայի պահանջների, և կատարել ենք էթիկայի պահպանման մեր այլ պարտականություններն այս պահանջներին և վերոնշյալ կանոնագրքերի համապատասխան:

Մենք հավատացած ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Ղեկավարության և կառավարման լիազոր անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, ինչպես նաև այնպիսի ներքին հսկողության համակարգի համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է՝ խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Ընկերությունը լուծարելու կամ Ընկերության գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման լիազոր անձիք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Tel: +374 60 528899
E-mail: bdo@bdoarmenia.am
www.bdoarmenia.am

23/6, Davit Anhaght Str.,
5th Floor, office 7
Yerevan, Armenia

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում:

- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:

- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:

- եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի հաշվետվությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր հաշվետվության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանն դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառում:

- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը:

Tel: +374 60 528899
E-mail: bdo@bdoarmenia.am
www.bdoarmenia.am

23/6, Davit Anhaght Str.,
5th Floor, office 7
Yerevan, Armenia

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, մենք տեղեկացնում ենք աուդիտի պլանավորված շրջանակի և ժամկետների, աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Այս անկախ աուդիտորական եզրակացության ներկայացման հիմք հանդիսացող աուդիտի իրականացման համար պատասխանատու գործընկերն է՝

«Բի-Դի-Օ Արմենիա» ՓԲԸ

Դավիթ Եդիգարյան, FCCA
Աուդիտի գործընկեր

Վահագն Սահակյան, FCCA
Տնօրեն

25 Հունիս 2026
Երևան

	Ծան.	2025թ. հազ. դրամ	2024թ. հազ. դրամ
Վարչական ծախսեր	5	(23,905)	(13,865)
Այլ եկամուտներ		5,594	1,657
Այլ ծախսեր	6	(19,448)	(30,783)
Գործառնական վնաս		**(37,759)**	**(42,991)**
Ֆինանսական եկամուտ	7	50,850	399,367
Ֆինանսական ծախս	7	(653,999)	(55,994)
Զուտ ֆինանսական (ծախս)/եկամուտ		**(603,149)**	**343,373**
(Վնաս)/Շահույթ մինչև հարկումը		**(640,908)**	**300,382**
Շահութահարկի գծով եկամուտ	8	7,342	2,955
Տարվա (վնաս)/շահույթ		**(633,566)**	**303,337**
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունք		**(633,566)**	**303,337**

Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված 6-ից 38 էջերում հաստատվել և ստորագրվել են Ընկերության ղեկավարության կողմից 2026թ. հունիսի 25-ին:

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները կազմում են ֆինանսական հաշվետվությունների բաղկացուցիչ մասը:

Եղիազար Քաղրամանյան
Գլխավոր տնօրեն

Արուսյակ Ազիզյան
Գլխավոր հաշվապահ

	Ծան	31.12.2025թ. հազ.դրամ	31.12.2024թ. հազ. դրամ
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	9	10,661,824	8,893,517
Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման համար	10	803,830	401,158
		11,465,654	9,294,675
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	11	462,711	112,646
Տրամադրված փոխառություններ	12	407,651	437,955
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	13	535,434	279,402
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	14	462,055	28,035
		1,867,851	858,038
Ընդամենը ակտիվներ		13,333,505	10,152,713
Պարտավորություններ			
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	16	8,414,748	4,778,898
Ֆինանսական երաշխավորության պայմանագրեր	18	4,523	-
Հետաձգված հարկային պարտավորություններ	8	81,329	51,654
		8,500,600	4,830,552
Ընթացիկ պարտավորություններ			
Վարկեր և փոխառություններ	16	2,729,424	2,757,712
Ֆինանսական երաշխավորության պայմանագրեր	18	4,536	-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	17	308,471	357,698
		3,042,431	3,115,410
Ընդամենը պարտավորություններ		11,543,031	7,945,962
Սեփական կապիտալ			
Կանոնադրական կապիտալ		1,650,657	1,647,701
Էմիսիոն եկամուտ		125,793	104,549
Կապիտալի բաշխում		453,648	260,559
Կուտակված (վնաս)/շահույթ		(439,624)	193,942
Ընդամենը սեփական կապիտալ	15	1,790,474	2,206,751
Ընդամենը պարտավորություններ և սեփական կապիտալ		**13,333,505**	**10,152,713**

«Էյչ Էներջի Սոլյուշնս» ՍՊԸ
Դրամական հոսքերի մասին հաշվետվություն

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

	Ծան.	2025թ. հազ. դրամ	2024թ. հազ. դրամ
Գործառնական գործունեությունից դրամական հոսքեր			
Վճարումներ մատակարարներին		(249,977)	(58,543)
Վճարումներ աշխատակիցներին		(27,017)	(18,083)
Վճարված հարկեր և պարտադիր վճարներ,բացի շահութահարկից		(8,701)	(11,592)
Այլ վճարումներ		(19,625)	(14,868)
Գործառնական գործունեությունից դրամական զուտ հոսք		**(305,320)**	**(103,085)**
Ներդրումային գործունեությունից դրամական հոսքեր			
Հիմնական միջոցների ձեռքբերում		(1,896,252)	**(2,544,724)**
Փոխառությունների տրամադրում		-	(290,000)
Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր		**(1,896,252)**	**(2,834,724)**
Ֆինանսավորման գործունեությունից դրամական հոսքեր			
Վարկերի և փոխառությունների ներգրավում	16	4,238,467	3,279,552
Վարկերի և փոխառությունների մարում	16	(1,106,638)	(8,226)
Տոկոսների վճարում	16	(504,843)	(325,264)
Ֆինանսավորման գործունեությունից դրամական միջոցների զուտ հոսքեր		**2,626,986**	**2,946,062**
Ընդամենը դրամական միջոցների զուտ հոսքեր		**425,414**	**8,252**
Դրամական միջոցների գծով փոխարժեքային տարբերություններ		8,606	(4,603)
Դրամական միջոցների մնացորդն առ 1 հունվարի		**28,035**	**24,386**
Դրամական միջոցների մնացորդն առ 31 դեկտեմբերի		**462,055**	**28,035**

«Էյչ Էներջի Սոլյուշնս» ՍՊԸ
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

	Կանոնադրական կապիտալ	Կապիտալի բաշխում	Էմիսիոն եկամուտ	Կուտակված վնաս	Ընդամենը
	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ
Մնացորդ առ 1 հունվարի 2024թ.	**1,633,050**	**-**	**-**	**(109,395)**	**1,523,655**
Հաշվետու տարվա շահույթ	-	-	-	303,337	**303,337**
Ընդամենը տարվա համապարփակ եկամուտ	**-**	-	-	303,337	**303,337**
Գործարքներ բաժնետիրոջ հետ					
Կանոնադրական կապիտալի համալրում	**14,651**	-	104,549	-	**119,200**
Այլ բաշխումներ	**-**	260,559	-	-	**260,559**
Մնացորդ առ 31 դեկտեմբերի 2024թ.	**1,647,701**	**260,559**	**104,549**	**193,942**	**2,206,751**
Մնացորդ առ 1 հունվարի 2025թ.	**1,647,701**	**260,559**	**104,549**	**193,942**	**2,206,751**
Հաշվետու տարվա վնաս	-	-	-	(633,566)	**(633,566)**
Ընդամենը տարվա համապարփակ վնաս	-	-	-	(633,566)	**(633,566)**
Գործարքներ բաժնետիրոջ հետ					
Կանոնադրական կապիտալի համալրում	2,956	-	21,244	-	**24,200**
Այլ բաշխումներ	**-**	193,089	-	-	**193,089**
Մնացորդ առ 31 դեկտեմբերի 2025թ.	**1,650,657**	**453,648**	**125,793**	**(439,624)**	**1,790,474**

«Էյչ Էներջի Սոլյուշնս» ՍՊԸ
Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունների ցանկ
2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա վերաբերյալ

1. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ 11
2. ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ 12
3. ՆՇԱՆԱԿԱԼԻ ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄՆԵՐ և ԴԱՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ 14
4. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ - ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ 15
5. ՎԱՐՉԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ 21
6. ԱՅԼ ԾԱԽՍԵՐ 21
7. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏ և ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԾԱԽՍԵՐ 21
8. ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԵԿԱՄՈՒՏ 21
9. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ 24
10. ԿԱՆԽԱՎՃԱՐՆԵՐ ՈՉ ԸՆԹԱՑԻԿ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՁԵՌՔԲԵՐՄԱՆ ՀԱՄԱՐ 25
11. ՊԱՇԱՐՆԵՐ 25
12. ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ 25
13. ԱՌԱՏՐԱՅԻՆ և ԱՅԼ ԴԵԲԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ 26
14. ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ և ԴՐԱՆՑ ՀԱՄԱՐԺԵՔՆԵՐ 26
15. ՄԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ 26
16. ՎԱՐԿԵՐ և ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ 27
17. ԱՌԱՏՐԱՅԻՆ և ԱՅԼ ԿՐԵԴԻՏՈՐԱԿԱՆ ՊԱՐՏՔԵՐ 29
18. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐ 29
19. ԿԱՊԱԿՑՎԱԾ ԿՈՂՄԵՐԻ ՄԻՋԼ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ 30
20. ՊԱՅՄԱՆԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 30
21. ՀԱՇՎԵՏՈՒ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻՑ ՀԵՏՈ ՏԵՂԻ ՈՒՆԵՑՈՂ ԴԵՊՔԵՐ 31
22. ՀԱՇՎԱՊԱՀԱԿԱՆ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 31
ՀԱՎԵԼՎԱԾ Ա – ՖՀՄՍ 13 ԻՐԱԿԱՆ ԱՐԺԵՔԻ ՉԱՓՄԱՆ ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄՆԵՐ 38

1. Ընկերության մասին

«Էյչ Էներջի Սոլյուշնս» ՍՊԸ-ն («Ընկերություն») հանդիսանում է սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն՝ Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի սահմանման համաձայն: Ընկերությունը հիմնադրվել է 2022թվականի սեպտեմբերի 16-ին:

Ընկերության իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Կոտայքի մարզ, Հրազդան, Գործարանային փող. 1:

Ընկերության գործունեության հիմնական ոլորտը ջերմային էներգիայի արտադրությունն է, որի նպատակով Ընկերությունը նախատեսում է կառուցել 50.1ՄՎտ դրվածքային էլեկտրական և 29.2 ՄՎտ ջերմային հզորությամբ էներգետիկ կենտրոն Հրազդան քաղաքում: Նախատեսվում է գործարկել 400,000,000 կՎտժ տարեկան արտադրողականությամբ բնական գազով աշխատող 4 հատ MAN20V35/44G TS մակնիշի գազմխոցային ագրեգատներ:

Հաշվետվության ներկայացման օրվա դրությամբ շինարարական աշխատանքները դեռևս ընթացքի մեջ են գտնվում, ավարտը կանխատեսվում է 2026թ. սեպտեմբերին:

Ընկերությունն ունի 8 աշխատակից (2024-ին՝ 5 աշխատակից):

2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության 64.66% բաժնեմասերի բաժնետերն է «Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋեկ)» ԲԲԸ-ն, 30.04% բաժնեմասերը պատկանում են Նաթելլա Արզումանովային և 5.30%՝-ը «ԼՈՏ Կապիտալ» ՓԲԸ-ին:

2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության 64.59% բաժնեմասերի բաժնետերն է «Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋեկ)» ԲԲԸ-ն, 20.06% բաժնեմասերը պատկանում են Արմեն Ղահրամանյանին, 10.03%-ը՝ Նաթելլա Արզումանովային և 5.32%՝-ը «ԼՈՏ Կապիտալ» ՓԲԸ-ին:

Ընկերության վերջնական հսկող անձը Սամվել Կարապետյանն է:

Կապակցված կողմերի հետ գործարքների մանրամասները ներկայացված են Ծանոթագրություն 19-ում՝ «Կապակցված կողմերի միջև գործարքներ»:

Հայաստանի գործարար միջավայրը

Ընկերությունն իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետությունում: Հետևաբար, Ընկերության գործունեության վրա ազդեցություն են ունենում Հայաստանի տնտեսությունը և ֆինանսական շուկաները: Իրավական, հարկային և օրենսդրական համակարգերը շարունակում են զարգանալ, սակայն ենթակա են տարբեր մեկնաբանությունների և հաճախակի փոփոխությունների, ինչը, այլ իրավական ու ֆինանսական խոչընդոտների հետ մեկտեղ, լրացուցիչ բարդություններ է ստեղծում Հայաստանում գործող կազմակերպությունների համար:

2025-2026 թվականներին Մերձավոր Արևելքում աշխարհաքաղաքական իրավիճակը սրվեց՝ կապված ԱՄՆ-ի, Իսրայելի, Իրանի և նրանց տարածաշրջանային դաշնակիցների միջև ռազմական լարվածության աճի հետ: Այս զարգացումները մեծացրել են տարածաշրջանային անորոշությունը, նպաստել էներգետիկ շուկաների տատանողականությանը և բարձրացրել միջազգային փոխադրումների և առևտրի ուղիների խաթարման ռիսկերը:

Հայաստանի՝ Իրանի հետ աշխարհագրական մոտիկության և Ադրբեջանի հետ շարունակվող լարվածության պայմաններում վերոնշյալ զարգացումները հանգեցրել են տարածաշրջանում աշխարհաքաղաքական ռիսկերի աճին: Չնայած հաշվետու ամսաթվի դրությամբ Հայաստանի տարածքում անմիջական ռազմական գործողություններ չեն իրականացվել, սահմանների մոտ անկայունությունը կարող է բացասաբար անդրադառնալ տնտեսական պայմանների, սահմանային առևտրի, մատակարարման շղթաների և ներդրումային ակտիվության վրա:

Բացի այդ, Ռուսաստանի և Ուկրաինայի միջև շարունակվող հակամարտությունը նպաստում է ավելի լայն տարածաշրջանային միջավայրում անորոշության պահպանմանը:

Ռուսաստանի Դաշնության տնտեսական ակտիվությունը զգալի ազդեցություն ունի Հայաստանի տնտեսության վրա՝ պայմանավորված զգալի ֆինանսական հոսքերով, ներառյալ դրամական փոխանցումները: Հետևաբար, Ռուսաստանի նկատմամբ քաղաքական լարվածությունը, միջազգային

պատժամիջոցները, շուկաների անկայունությունը, գնաճային ճնշումները և այլ ռիսկեր կարող են բացասաբար անդրադառնալ Հայաստանի տնտեսական հեռանկարների վրա:

Միևնույն ժամանակ, Հայաստանի տնտեսությունը ցուցաբերել է կայունություն գլոբալ անկայունության պայմաններում՝ գրանցելով բարձր մակրոտնտեսական ցուցանիշներ ինչպես 2024, այնպես էլ 2025 թվականներին: Աճը հիմնականում պայմանավորված է զբոսաշրջության աճով, ընկերությունների տեղափոխմամբ Հայաստան և դրամական փոխանցումների զգալի ավելացմամբ: Արդյունքում, 2025 թվականի հունվար-դեկտեմբեր ժամանակահատվածում ՀՆԱ-ի աճը կազմել է 7.1%: Կառավարության 2021-2026 թվականների տնտեսական ծրագիրը միտված է արտահանման վրա հիմնված և ներդրումներով պայմանավորված աճի մոդելի զարգացմանը՝ լայնածավալ բարեփոխումների միջոցով:

Այս միջավայրը էական ազդեցություն ունի Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա: Ղեկավարությունը իրականացնում է անհրաժեշտ միջոցառումներ՝ ապահովելու գործունեության կայունությունը: Այնուամենայնիվ, հաշվի առնելով աշխարհաքաղաքական և տնտեսական զարգացումների անկանխատեսելի բնույթը, ղեկավարությունը չի կարող վստահորեն գնահատել դրանց հնարավոր ազդեցությունը Ընկերության ապագա ֆինանսական արդյունքների և վիճակի վրա:

Ֆինանսական հաշվետվությունները արտացոլում են ղեկավարության գնահատականը Հայաստանի գործարար միջավայրի և դրա ազդեցության վերաբերյալ Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա: Ապագա զարգացումները կարող են տարբերվել այս գնահատականներից:

2. Պատրաստման հիմունքներ

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների (ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտներ) համաձայն:

Ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար որդեգրված հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները ներկայացված են Ծանոթագրություն 22-ում: Դրանք հետևողականորեն կիրառվել են ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար, եթե այլ բան նշված չէ:

Ֆինանսական հաշվետվությունները ներկայացված են ՀՀ դրամով, որը հանդիսանում է նաև Ընկերության գործառնական արժույթը: Գումարային արժեքները կլորացվել են հազարներով, եթե այլ բան նշված չէ:

ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների համաձայն ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս անհրաժեշտ է կատարել հաշվապահական հաշվառման նշանակալի գնահատումներ և դատողություններ: Վերջիններիս կիրառման ոլորտները և ազդեցությունը բացահայտված են Ծանոթագրություն 3-ում:

Չափման հիմքերը

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են սկզբնական արժեքի հիման վրա:

Հաշվապահական հաշվառման քաղաքականության փոփոխություններ

ա) 2025թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտած նոր ստանդարտներ, մեկնաբանություններ և փոփոխություններ

Փոխանակելիության բացակայություն (ՀՀՄՍ 21-ի փոփոխություն)

2023 թվականի օգոստոսի 15-ին ՀՀՄՍԽ-ն հրապարակեց «Փոխանակելիության բացակայություն»-ը, որով փոփոխվեց ՀՀՄՍ 21 «Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների ազդեցությունը» (Փոփոխություններ):

- Փոխանակելիության բացակայություն (ՀՀՄՍ 21 «Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների ազդեցությունը» (Փոփոխություն))

2023 թվականի օգոստոսի 15-ին ՀՀՄՍԽ-ն հրապարակեց «Փոխանակելիության բացակայություն»-ը, որով փոփոխվեց ՀՀՄՍ 21 «Արտարժույթի փոխարժեքի փոփոխությունների ազդեցությունը» (Փոփոխություններ): Փոփոխությունները պահանջում են գնահատել, թե երբ է արժույթը փոխանակելի այլ արժույթի հետ, և երբ՝ ոչ: Փոփոխությունների համաձայն կազմակերպությունը պետք է գնահատի սփոթ փոխարժեքը, եթե այն եզրակացնում է, որ արժույթը փոխանակելի չէ այլ արժույթի հետ:

Այս փոփոխությունները որևէ ազդեցություն չեն ունեցել Ընկերության ֆինանսական հաշվետվությունների վրա:

(բ) Հրապարակված, բայց դեռ ուժի մեջ չմտած ստանդարտներ, մեկնաբանությունները և փոփոխությունները

Կան մի շարք ստանդարտներ, ստանդարտների փոփոխություններ և մեկնաբանություններ, որոնք թողարկվել են ՀՀՄՍԽ-ի կողմից և գործելու են ապագա հաշվետու ժամանակաշրջաններում, որոնք սակայն Ընկերությունը որոշել է վաղաժամ չընդունել:

Հետևյալ փոփոխություններն ուժի մեջ են մտնում 2026 թվականի հունվարի 1-ից սկսած տարեկան ժամանակաշրջանների համար:

- Փոփոխություններ ֆինանսական գործիքների դասակարգման և չափման մեջ (ՖՀՄՍ 9-ի («Ֆինանսական գործիքներ») և ՖՀՄՍ 7-ի («Ֆինանսական գործիքներ. Բացահայտումներ») փոփոխություններ)
- Բնությունից կախված էլեկտրաէներգիայի վերաբերյալ պայմանագրեր (ՖՀՄՍ 9-ի և ՖՀՄՍ 7-ի փոփոխություններ):

Հետևյալ փոփոխություններն ուժի մեջ են մտնում 2027 թվականի հունվարի 1-ից սկսած ժամանակաշրջանի համար.

ՖՀՄՍ 18 Ներկայացում և բացահայտում ֆինանսական հաշվետվություններում

- «Ներկայացում և բացահայտում ֆինանսական հաշվետվություններում» ՖՀՄՍ 18-ը փոխարինում է «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում» ՀՀՄՍ 1-ին և պարտադիր բնույթ է կրում 2027 թվականի հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: ՖՀՄՍ 18-ը, որը հրապարակվել է ՀՀՄՍԽ-ի կողմից 2024 թվականի ապրիլի 9-ին, սահմանում է զգալի նոր պահանջներ ֆինանսական հաշվետվությունների ներկայացման համար՝ կենտրոնանալով հետևյալի վրա.

- Շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունը, ներառյալ պահանջները պարտադիր ենթագումարների համար, որոնք պետք է ներկայացվեն: ՖՀՄՍ 18-ը ներկայացնում է պահանջներ եկամուտների և ծախսերի հոդվածների համար, որոնք պետք է դասակարգվեն ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում հինգ կատեգորիաներից մեկում: Այս դասակարգման արդյունքում ներկայացվում են որոշակի ենթագումարներ, օրինակ՝ գործառնական կատեգորիայի բոլոր եկամուտների և ծախսերի հոդվածների հանրագումարը, ներառյալ «գործառնական շահույթի կամ վնասի» նոր պարտադիր ենթագումարը:

- Տեղեկատվության համախմբում և տարանջատում, ներառյալ ընդհանուր սկզբունքների ներդրումը, թե ինչպես պետք է տեղեկատվությունը համախմբվի և տարանջատվի ֆինանսական հաշվետվություններում:

- Ղեկավարության կողմից սահմանված կատարողականի չափորոշիչներին (MPM) առնչվող բացահայտումներ, որոնք ֆինանսական կատարողականի չափումներ են՝ հիմնված ՖՀՄՍ-ներով պահանջվող ընդհանուր կամ ենթաընդհանուր գումարի վրա համապատասխան ճշգրտումներով (օրինակ՝ «ճշգրտված շահույթ կամ վնաս»): Կազմակերպություններից կպահանջվի բացահայտել MPM-ն իրենց ֆինանսական հաշվետվություններում, ներառյալ MPM-ի համադրումը ՖՀՄՍ-ի ստանդարտներին համապատասխան հաշվարկված մոտակա ընդհանուր կամ ենթաընդհանուր գումարի հետ: ՖՀՄՍ 18-ի նպատակն է բարելավել ընկերությունների գործունեության արդյունքների վերաբերյալ հաշվետվությունների համեմատելիությունը և թափանցիկությունը: ՖՀՄՍ 18-ը նաև հանգեցրել է չնչին փոփոխություններին դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում:

ՖՀՄՍ 19 Դուստր ընկերություններ առանց հանրային ֆինանսական հաշվետվողականության. Բացահայտումներ

2024 թվականի մայիսի 9-ին ՀՀՄՍԽ-ը հրապարակեց ՖՀՄՍ 19-ը՝ «Դուստր ընկերություններ առանց հանրային ֆինանսական հաշվետվողականության. բացահայտումներ»: Շահագրգիռ կողմերը դիմել էին ՀՀՄՍԽ՝ խնդրելով թույլատրել դուստր կազմակերպությանը, որը հաշվետու է իր համախմբված ֆինանսական հաշվետվություններում ՖՀՄՍ կիրառող մայր կազմակերպության առջև, կիրառել ՖՀՄՍ-ներն իր սեփական ֆինանսական հաշվետվություններում բացահայտման նվազեցված պահանջներով: Ելնելով այս դիմումից՝ ՀՀՄՍԽ-ը իր հետազոտական պորտֆելում ավելացրեց մի նախագիծ առանց հանրային

ֆինանսական հաշվետվողականության դուստր ընկերությունների համար բացահայտման նվազեցված պահանջներ ապահովելու վերաբերյալ: Նախագիծն ավարտվեց ՖՀՄՍ 19-ի թողարկմամբ, որը համապատասխան դուստր ընկերություններին թույլ է տալիս կիրառել բացահայտման նվազեցված պահանջներ՝ միաժամանակ կիրառելով ճանաչման, չափման և ներկայացման պահանջները: Օրինակ, ՖՀՄՍ 19-ի համաձայն, կազմակերպությունը, որն ունի գործարքներ ՖՀՄՍ 2-ի /Բաժնետոմսերի վրա հիմնված վճարումներ/ շրջանակներում, չի կիրառի ՖՀՄՍ 2.44-52-ի բացահայտման պահանջները, որոնք շատ ընդարձակ են: Փոխարենը, կազմակերպությունը պետք է բացահայտի միայն ՖՀՄՍ 19-ի 31-34-րդ պարագրաֆների տեղեկատվությունը, որը ներառում է բաժնետոմսերի վրա հիմնված վճարման պայմանավորվածությունների նկարագրությունը, բաժնետոմսերի օպցիոնների չափը և իրագործման միջին կշռված արժեքները, կազմակերպության՝ բաժնետոմսերի վրա հիմնված վճարման գործարքների իրական արժեքը չափելու կարգը, ինչպես նաև ՖՀՄՍ 2-ի շրջանակներում գործարքների վերաբերյալ այլ ընդհանուր տեղեկությունները:

Բացահայտման պահանջների կրճատման աստիճանը պատկերացնելու համար պետք է նշել, որ ՖՀՄՍ 2-ի՝ բացահայտման պահանջներին վերաբերող հատվածը ներկայումս պարունակում է 991 բառ, մինչդեռ ՖՀՄՍ 19-ը պարունակում է ընդամենը 250 բառ՝ կապված ՖՀՄՍ 2-ի համաձայն տեղեկատվության բացահայտման հետ: ՖՀՄՍ 19-ի պահանջներին համապատասխանելու չափանիշները հետևյալն են.

- Կազմակերպությունը դուստր ընկերություն է հանդիսանում (ինչպես սահմանված է ՖՀՄՍ 10-ի /Համախմբված ֆինանսական հաշվետվություններ/ Հավելված Ա-ում),
- Կազմակերպությունը չունի հանրային հաշվետվողականություն, և
- Կազմակերպությունն ունի վերջնական կամ միջանկյալ մայր ընկերություն, որը հրապարակում է հանրային օգտագործման համար հասանելի համախմբված ֆինանսական հաշվետվություններ, որոնք համապատասխանում են ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտներին: Կազմակերպությունն ունի հանրային հաշվետվողականություն, եթե.
- նրա պարտքային կամ բաժնային գործիքները շրջանառվում են բաց շուկայում, կամ այն գտնվում է բաց շուկայում շրջանառելու համար այդպիսի գործիքներ թողարկելու գործընթացում, կամ
- այն ֆիդուցիար պարտականությունների շրջանակում պահում է ակտիվներ արտաքին կողմերի լայն խմբերի համար՝ որպես իր հիմնական գործունեություններից մեկը:

Ընկերությունը ներկայումս գնահատում է այս նոր հաշվապահական ստանդարտների և փոփոխությունների ազդեցությունը: Ընկերությունը չի ակնկալում, որ փոփոխությունները էական ազդեցություն կունենան իր ֆինանսական հաշվետվությունների վրա:

Ընկերությունը չի ակնկալում, որ ՀՀՄՍԽ-ի կողմից թողարկված այլ ստանդարտներ, որոնք դեռ կիրառության մեջ չեն մտել, էական ազդեցություն կունենան Ընկերության վրա:

3. Նշանակալի հաշվապահական գնահատումներ և դատողություններ

Ընկերությունը կատարում է որոշ գնահատումներ և ենթադրություններ ապագա ժամանակաշրջանների վերաբերյալ: Գնահատումներն ու դատողությունները մշտապես վերանայվում են՝ հիմնվելով պատմական փորձի և այլ գործոնների վրա, ինչպես նաև ապագա իրադարձությունների վերաբերյալ ողջամիտ ակնկալիքների վրա: Այդուհանդերձ, փաստացի փորձը կարող է տարբերվել կատարված գնահատումներից և ենթադրություններից: Ստորև ներկայացված են այն գնահատումները և ենթադրությունները, որոնք պարունակում են զգալի ռիսկ, քանի որ հաջորդ ֆինանսական տարում կարող են ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների էական ճշգրումների պատճառ հանդիսանալ:

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետ (Ծանոթագրություն 22)

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետների գնահատումը (Ծանոթագրություն 22) դատողության հարց է, որը հիմնված է նման ակտիվների օգտագործման փորձի վրա: Ակտիվների ապագա տնտեսական օգուտները հիմնականում սպառվում են օգտագործման միջոցով: Սակայն այլ գործոններ, ինչպիսիք են տեխնիկական կամ առևտրային հնությունը, մաշվածությունը, հաճախ հանգեցնում են ակտիվների մեջ արտացոլված տնտեսական օգուտների նվազմանը:

Ղեկավարությունը գնահատում է մնացած օգտակար ծառայության ժամկետները ըստ ակտիվների ընթացիկ տեխնիկական վիճակի և գնահատված ժամանակահատվածի, որի ընթացքում ակնկալվում է, որ ակտիվները կազմակերպության համար տնտեսական օգուտներ կբերեն:

Հիմնական միջոցները վերագնահատվում են կանոնավոր հիմունքով՝ կախված դրանց իրական արժեքի փոփոխություններից: Վերագնահատման աճը ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքում, իսկ նվազումը՝ շահույթում կամ վնասում, բացառությամբ նախկին վերագնահատումների վերականգնման դեպքերի:

Տեղեկատվությունը կապիտալի բաշխումների հետ կապված հաշվապահական հաշվառման սկզբունքների կիրառման ժամանակ ղեկավարության կողմից կատարված ենթադրությունների վերաբերյալ, որոնք նշանակալի ազդեցություն ունեն ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների վրա, ներկայացված է Ծան. 15-ում:

Իրական արժեքի չափում

Մի շարք ակտիվներ և պարտավորություններ պահանջվում է չափել իրական արժեքով և/կամ բացահայտել դրանց իրական արժեքը Ընկերության ֆինանսական հաշվետվություններում:

Ընկերության ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների իրական արժեքի չափման համար հնարավորինս օգտագործվում են շուկայական դիտելի ելակետային տվյալներ: Իրական արժեքի չափման համար օգտագործվող ելակետային տվյալները դասակարգվում են ըստ տարբեր մակարդակների՝ կախված նրանից, թե որքանով են գնահատման մեթոդի մեջ օգտագործվող տվյալները դիտելի («իրական արժեքի հիերարխիա»):

- *Մակարդակ 1. Նույնական ակտիվների կամ պարտավորությունների համար ակտիվ շուկաներում գնանշվող գներ (չճգրտված)*
- *Մակարդակ 2: Ուղղակի կամ անուղղակիորեն դիտելի ելակետային տվյալներ՝ բացառությամբ 1-ին մակարդակում ներառվող գնանշվող գներից*
- *Մակարդակ 3: Ոչ դիտելի ելակետային տվյալներ (այսինքն՝ հիմնված չեն շուկայական տվյալների վրա)*

Ակտիվների և պարտավորությունների դասակարգումը վերոնշյալ մակարդակներում հիմնվում է ամենացածր մակարդակի ելակետային տվյալների վրա, որոնք ունեն զգալի ազդեցություն իրական արժեքի չափման վրա: Տեղափոխությունը մի մակարդակից մյուսը ճանաչվում է այն ժամանակաշրջանում, որի ընթացքում այն տեղի է ունենում:

4. Ֆինանսական գործիքներ - ռիսկերի կառավարում

Իր գործունեության արդյունքում Ընկերությունը կարող է ենթարկվել հետևյալ ֆինանսական ռիսկերին՝

- Պարտքային ռիսկ
- Իրացվելիության ռիսկ
- Շուկայական ռիսկ

Ընկերությունը կարող է ենթարկվել իր կողմից ֆինանսական գործիքների օգտագործումից առաջացող ռիսկերի, ինչպես բնորոշ է մյուս բոլոր ձեռնարկատիրական գործունեություններին:
Սույն ծանոթագրությունում ներկայացված են Ընկերության նպատակները, քաղաքականությունը, ռիսկերի կառավարման գործընթացները և դրանց չափման մեթոդները: Սույն ֆինանսական հաշվետվություններում ներկայացված է քանակական տեղեկատվություն վերոնշյալ ռիսկերի վերաբերյալ:

Ղեկավարությունը պատասխանատվություն է կրում Ընկերության ռիսկերի կառավարման համակարգի մշակման և վերահսկողության համար:

Ֆինանսական գործիքներից առաջացող ռիսկերի, Ընկերության նպատակների, քաղաքականության, ռիսկերի կառավարման գործընթացների և դրանց չափման մեթոդների հետ կապված նախորդ ժամանակաշրջանների համեմատ էական փոփոխություններ չեն գրանցվել (եթե այլ բան սահմանված չէ):

(ա) Հիմնական ֆինանսական գործիքներ

Ընկերության հիմնական ֆինանսական գործիքները, որոնցից առաջանում են ռիսկեր, ներկայացված են ստորև.

- Տրամադրված փոխառություններ
- Առևտրային դեբիտորական պարտքեր
- Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ
- Վարկեր և փոխառություններ

- Ֆինանսական երաշխավորության պայմանագրեր
- Առևտրային կրեդիտորական պարտքեր

(բ) Ֆինանսական գործիքներ ըստ խմբերի

Ֆինանսական ակտիվներ	**Ամորտիզացված արժեքով չափվող**	
	31/12/2025թ.	**31/12/2024թ.**
	հազար դրամ	**հազար դրամ**
Տրամադրված փոխառություններ	407,651	437,955
Առևտրային դեբիտորական պարտքեր	-	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	462,055	28,035
	869,706	**465,990**

Ֆինանսական պարտավորություններ	**Ամորտիզացված արժեքով չափվող**	
	31. 12. 2025թ.	**31. 12. 2024թ.**
	հազ. դրամ	**հազ. դրամ**
Վարկեր և փոխառություններ	11,144,172	7,536,610
Ֆինանսական երաշխավորության պայմանագրեր	9,059	-
Առևտրային կրեդիտորական պարտքեր	301,251	356,662
	11,454,482	**7,893,272**

(գ) Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքներ

Իրական արժեքով չչափվող ֆինանսական գործիքները ներառում են տրամադրված փոխառությունները, առևտրային դեբիտորական պարտքերը, դրամական միջոցները և դրանց համարժեքները, վարկերը և փոխառությունները, տրամադրված երաշխավորության պայմանագրերը, առևտրային կրեդիտորական պարտքերը:

Նշված ֆինանսական գործիքների հաշվեկշռային արժեքը մոտավորապես հավասարվում է իրական արժեքին:

Հավելված Ա-ում ներկայացված են իրական արժեքի հիերարխիայի, գնահատման մեթոդների և վարկերի ու փոխառությունների իրական արժեքի որոշման հետ կապված նշանակալի ոչ դիտելի ելակետային տվյալների մանրամասներ, որոնք ընդգրկված են իրական արժեքի հիերարխիայի 3-րդ մակարդակում:

Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը ֆինանսական վնասների ռիսկն է՝ պայմանավորված հաճախորդի կամ ֆինանսական գործիքի կողմերի պայմանագրային պարտականությունների չկատարմամբ:

Պարտքային ռիսկն առաջանում է նաև բանկերում պահվող դրամական միջոցներից և դրանց համարժեքներից, ինչպես նաև դեբիտորական պարտքերի և տրամադրված փոխառությունների հետ կապված: Ընկերությունն իր միջոցները տեղաբաշխում է միայն հայաստանյան խոշորագույն բանկերում:

Առևտրային դեբիտորական պարտքեր

Ընկերությունը չի պահանջում գրավ առևտրային և այլ դեբիտորական պարտքերի համար:

Ակնկալվող պարտքային կորուստների գնահատում

31.12.2025

հազ. դրամ	**Միջին կշռված կորստի տոկոս**	**Համախառն հաշվեկշռային գումար**	**Արժեզրկումից կորստի գումարը**
Դեբիտորական պարտքեր և պայմանագրային ակտիվներ			
Ցածր ռիսկ	100%	16,364	(16,364)
		16,364	**(16,364)**

31.12.2024 *հազ. դրամ*	Միջին կշռված կորստի տոկոս	Համախառն հաշվեկշռային գումար	Արժեզրկումից կորստի գումարը
Դեբիտորական պարտքեր և պայմանագրային ակտիվներ			
Ցածր ռիսկ	100%	16,364	(16,364)
		16,364	(16,364)

Ակնկալվող պարտքային կորուստների գնահատում իրավաբանական անձանց համար

Ընկերությունը պարտքային ռիսկին ենթարկվող ֆինանսական գործիքին տալիս է պարտքային ռիսկի վարկանշավորման մակարդակ այն տվյալների հիման վրա, որոնք օգտագործվում են կորստի ռիսկը կանխատեսելու համար (որոնք ներառում են, սակայն չեն սահմանափակվում հետևյալով՝ արտաքին վարկանիշներ, աուդիտի ենթարկված ֆինանսական հաշվետվություններ, դրամական հոսքերի կանխատեսումներ և հաճախորդի մասին մամուլի հրապարակած տեղեկատվություն), և կիրառելով պարտքային որակի վերաբերյալ փորձագետների դատողությունները: Պարտքային ռիսկի վարկանշավորման մակարդակները սահմանվում են որակական և քանակական գործոնների հիման վրա, որոնք վկայում են պարտքի կետանցման ռիսկի մասին և համընկնում են այնպիսի գործակալությունների արտաքին վարկանշավորման սահմանումներին ինչպիսին «Moody's Investor Services»-ն է:

Տրամադրված ֆինանսական երաշխավորություններ

Ընկերությունը չի գտնում, որ այլ կողմերի պարտավորությունների կատարումը երաշխավորելու համար իր կողմից կնքված ֆինանսական երաշխավորության պայմանագրերը հանդիսանում են ապահովագրության պայմանագրեր և հաշվառում է այդ պայմանագրերը ՖՀՄՍ 9-ի համաձայն: Ընկերության քաղաքականության համաձայն՝ ֆինանսական երաշխավորությունները տրամադրվում են միայն կապակցված կողմերի պարտավորությունների համար: 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը տրամադրել է երաշխավորություններ մայր կազմակերպությանը տրված վարկերի հետ կապված (Ծան. 18): Ֆինանսական երաշխավորությունների գծով ակնկալվող պարտքային կորուստները գնահատելու համար Ընկերությունը կիրառում է առևտրական դեբիտորական պարտքերի համար օգտագործվող մոտեցմանը նմանատիպ մոտեցում:

Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունն ուներ 460,248 հազար ՀՀ դրամ գումարով բանկային հաշիվների մնացորդներ (2024թ.՝ 28,035 հազար ՀՀ դրամ), որոնք իրենցից ներկայացնում են պարտքային ռիսկին ենթարկվածության առավելագույն չափն այդ ակտիվների գծով:

2024թ. դեկտեմբերի 31-ի և 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ընդհանուր դրամական միջոցների և դրանց համարժեքների 100% պահվում է «Moody's Investor Services» գործակալության կողմից տրված “Ba3” վարկանիշով բանկում:

Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկը ֆինանսական գործիքների ապագա դրամական հոսքերի իրական արժեքի փոփոխության ռիսկն է շուկայական գների փոփոխության արդյունքում: Շուկայական ռիսկը բաղկացած է երեք տեսակի ռիսկերից՝ ապրանքների գնի, տոկոսադրույքի և արտարժույթի փոխարժեքի ռիսկերից: Շուկայական ռիսկի ներգործությանը ենթարկված ֆինանսական գործիքները ներառում են վարկերը և փոխառությունները, դրամական միջոցները և դրանց համարժեքները, տրամադրված փոխառությունները, առևտրային դեբիտորական և կրեդիտորական պարտքերը:

Արտարժութային ռիսկ

Արտարժութային ռիսկն առաջանում է, երբ Ընկերության գործարքներն արտահայտված չեն գործառնական արժույթով:

Այլ արժույթով արտահայտված ակտիվների և պարտավորությունների համար Ընկերությունը հղում է կատարում ՀՀ կենտրոնական բանկի կողմից հրապարակված փոխարժեքներին հաշվետու ամսաթվի դրությամբ, որոնք ներկայացված են ստորև (արտարժույթի մեկ միավորի արժեք արտահայտված ՀՀ դրամով).

	31. 12. 2025թ. հազ. դրամ	31.12.2024թ. հազ. դրամ
1 ԱՄՆ դոլար	381,36	396. 56
1 ԵՎՐՈ	449.01	413.89
1 ռուբլի	4.87	3.71

2025թ. և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության արտարժութային ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների կառուցվածքն ըստ արժույթների ներկայացված է ստորև՝

Եվրո

	31.12.2025թ. հազ. դրամ	31.12.2024թ. հազ. դրամ
Ֆինանսական ակտիվներ		
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	445,336	87
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	445,336	87
Ֆինանսական պարտավորություններ		
Վարկեր և փոխառություններ	(9,030,352)	(4,814,044)
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	**(9,030,352)**	(4,814,044)
Զուտ դիրքը	**(8,585,016)**	**(4,813,957)**

Հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ դրամի նկատմամբ Եվրոյի 10% արժևորումը/(արժեզրկումը) այլ փոփոխականների հաստատուն մնալու պայմանով կհանգեցնի Ընկերության զուտ ակտիվների և տարվա ֆինանսական արդյունքի (նվազմանը)/աճին՝ 858,502 հազար դրամի չափով (2024թ.՝ 481,396 հազար դրամ), միևնույն ժամանակ:

ԱՄՆ դոլար

	31.12.2025թ. հազ. դրամ	31.12.2024թ. հազ. դրամ
Ֆինանսական ակտիվներ		
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	-	1,594
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	-	1,594
Ֆինանսական պարտավորություններ		
Վարկեր և փոխառություններ	(1,258,158)	(1,408,581)
Ֆինանսական երաշխավորության պայմանագրեր	(9,059)	-
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	**(1,267,217)**	(1,408,581)
Զուտ դիրքը	**(1,267,217)**	**(1,406,987)**

Հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ դրամի նկատմամբ ԱՄՆ դոլարի 10% արժևորումը/(արժեզրկումը) այլ փոփոխականների հաստատուն մնալու պայմանով կհանգեցնի Ընկերության զուտ ակտիվների և տարվա ֆինանսական արդյունքի (նվազմանը)/աճին՝ 126,722 հազար դրամի չափով (2024թ.՝ 140,699 հազար դրամ), միևնույն ժամանակ:

	Ռուբլի	
	31.12.2025թ.	**31.12.2024թ.**
	հազ. դրամ	**հազ. դրամ**
Ֆինանսական ակտիվներ		
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	3,090	-
Ընդամենը ֆինանսական ակտիվներ	3,090	-
Ֆինանսական պարտավորություններ		
Առևտրական և այլ կրեդիտորական պարտքեր	(240,023)	(350,224)
Ընդամենը ֆինանսական պարտավորություններ	**(240,023)**	**(350,224)**
Զուտ դիրքը	**(236,933)**	**(350,224)**

Հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ դրամի նկատմամբ Ռուբլու 10% արժևորումը/(արժեզրկումը) այլ փոփոխականների հաստատուն մնալու պայմանով կհանգեցնի Ընկերության զուտ ակտիվների և տարվա ֆինանսական արդյունքի (նվազմանը)/աճին՝ 23,693 հազար դրամի չափով (2024թ.՝ 35,022 հազար դրամ), միևնույն ժամանակ:

Տոկոսադրույքի ռիսկ

Տոկոսադրույքների փոփոխություններն ազդեցություն են ունենում հիմնականում տրամադրված փոխառությունների և վարկերի վրա՝ փոխելով կա՛մ դրանց իրական արժեքը (հաստատուն տոկոսադրույքով պարտք), կա՛մ ապագա դրամական հոսքերը (փոփոխուն տոկոսադրույքով պարտք):
Հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերության բոլոր տոկոսակիր ֆինանսական գործիքների տոկոսադրույքը հաստատուն է:

Ղեկավարությունը չի կիրառում հաստատուն կամ փոփոխուն տոկոսադրույքների նկատմամբ Ընկերության ենթարկվածությունը որոշող ձևակերպված քաղաքականություն: Այնուամենայնիվ, նոր վարկերի կամ փոխառությունների դեպքում ղեկավարությունը հիմնվում է իր դատողությունների վրա որոշելու համար, թե, որ տոկոսադրույքը՝ հաստատուն թե փոփոխուն, ավելի բարենպաստ կլինի Ընկերության համար մինչև մարման ժամկետն ակնկալվող ժամանակաշրջանի ընթացքում:

Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն առաջանում է Ընկերության գործող կապիտալի կառավարումից, ֆինանսական ծախսերից և պարտքային գործիքների հիմնական գումարների մարումներից:

Իրացվելիության ռիսկը կապված է Ընկերության՝ ֆինանսական պարտավորությունները սահմանված ժամկետներում մարելու հետ կապված դժվարությունների հետ:

Համաձայն Ընկերության քաղաքականության՝ Ընկերությունը պետք է ունենա պարտավորությունների մարման համար բավարար դրամական միջոցներ: Այս առումով այն ձգտում է պահպանել բավարար դրամական միջոցներ, որպեսզի կարողանա մարել սահմանված պարտավորությունները: Դրամական միջոցների բավարարությունը նաև ապահովվում է վարկային պայմանագրերից բխող չօգտագործված վարկային միջոցների օգտագործման հաշվին:

Ստորև ներկայացված են Ընկերության ֆինանսական պարտավորությունների (չզեղչված պայմանագրային դրամական միջոցների հոսքեր) մարման պայմանագրային ժամկետները:

	Պայմանագրային դրամական հոսքեր	Հաշվեկշռա-յին արժեք	Ցպահանջ և մինչև 2 ամիս	2-12 ամիս	1-2 տարի	2-5 տարի	5 տարի և ավելի
	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ
2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ							
Գրավով ապահովված վարկեր առևտրային բանկերից	12,590,137	8,933,627	94,829	1,171,236	1,768,654	5,034,819	4,520,599
Գրավով չապահովված փոխառություններ մայր կազմակերպությունից	2,424,609	2,210,545	-	2,424,609	-	-	-
Առևտրային կրեդիտորական պարտքեր	301,251	301,251	-	301,251	-	-	-
Տրամադրված ֆինանսական երաշխավորություններ	826,283	9,059	-	4,536	4,523	-	-
	16,142,280	**11,454,482**	**94,829**	**3,901,632**	**1,773,177**	**5,034,819**	**4,520,599**
2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ							
Գրավով ապահովված վարկեր առևտրային բանկերից	15,957,673	4,814,044	109,138	533,379	2,060,344	6,749,094	6,505,718
Գրավով չապահովված փոխառություններ մայր կազմակերպությունից	2,950,388	2,722,566	30,000	2,920,388	-	-	-
Առևտրային կրեդիտորական պարտքեր	356,662	356,662	-	356,662	-	-	-
	19,264,723	**7,893,272**	**139,138**	**3,810,429**	**2,060,344**	**6,749,094**	**6,505,718**

Կապիտալի կառավարում

Ընկերությունը իր կապիտալը կառավարում է՝ ապահովելու համար Ընկերության շարունակական գործունեությունը:

Ընկերության կապիտալի կառուցվածքը ներառում է փոխառու միջոցները (ընթացիկ և ոչ ընթացիկ պարտավորություններ) և սեփական կապիտալը (ներառող կանոնադրական կապիտալը, էմիսիոն եկամուտը, կապիտալի բաշխումը և կուտակված վնասը):

Չի ակնկալվում, որ ժամկետայնության վերլուծությունում ներառված դրամական միջոցների հոսքերը կարող են առաջանալ շատ ավելի վաղ ժամկետներում կամ նշանակալիորեն տարբեր գումարների չափով: Ընկերության ընթացիկ ակտիվները փոքր են անհրաժեշտ դրամական միջոցների արտահոսքերից, սակայն, ընթացիկ պարտավորությունները ներառում են 2,210,545 հազար դրամ ստացված փոխառությունների գծով մնացորդ «Հրազդանի էներգետիկ կազմակերպությունից (Հրազ ՋԷԿ)»: Ընկերությունը «Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋԷԿ)»-ից ստացել է պաշտոնական նամակ այն մասին, որ վերջինս իր կողմից փոխառությունների գծով պարտավորությունը Ընկերությունից ետ չի պահանջի, եթե վերջինիս ֆինանսական վիճակը թույլ չտա կատարել պարտավորությունը:

5. Վարչական ծախսեր

	2025թ. հազ. դրամ	2024թ. հազ. դրամ
Աշխատակիցներին հատուցումներ	12,708	8,725
Մասնագիտական ծառայություններ	3,273	1,200
Բանկային և ապահովագրական ծախսեր	593	2,365
Մաշվածություն	2,598	641
Գործուղում	2,147	-
Ներկայացուցչական ծախսեր	1,766	-
Այլ	820	934
	23,905	**13,865**

6. Այլ ծախսեր

	2025թ. հազ. դրամ	2024թ. հազ. դրամ
Արտարժույթի փոխարկումից ծախսեր	18,814	11,694
Առևտրական դեբիտորական պարտքի արժեզրկում	-	16,364
Տույժեր և տուգանքներ	-	2,630
Այլ ծախսեր	634	95
	19,448	**30,783**

7. Ֆինանսական եկամուտ և ֆինանսական ծախսեր

	2025թ. հազ.դրամ	2024թ. հազ.դրամ
Տրամադրված փոխառությունների զեղչման ազդեցությունից եկամուտ	50,850	33,950
Զուտ օգուտ/վնաս փոխարժեքային տարբերություններից	-	365,417
Ընդամենը ֆինանսական եկամուտ	**50,850**	**399,367**
Տրամադրված փոխառությունների զեղչման ազդեցության հակադարձումից ծախս	(81,154)	(55,994)
Զուտ օգուտ/վնաս փոխարժեքային տարբերություններից	(572,845)	-
Ընդամենը ֆինանսական ծախսեր	**(653,999)**	**(55,994)**
	(603,149)	**343,373**

8. Շահութահարկի գծով եկամուտ

Շահույթում կամ վնասում ճանաչված գումարներ

Շահութահարկի գծով ծախսի հիմնական բաղադրիչներն են՝

	2025թ. հազ. դրամ	2024թ. հազ. դրամ
Շահութահարկի գծով ծախս	(5,369)	-
Ժամանակավոր տարբերությունների գծով հարկային եկամուտ	12,711	2,955
Ընդամենը շահութահարկի գծով հարկային եկամուտ	**7,342**	**2,955**

Հայաստանի Հանրապետությունում շահութահարկի դրույքաչափը 18% է (2024թ.՝ 18%):

Շահութահարկի արդյունավետ դրույքաչափը տարբերվում է շահութահարկի՝ օրենքով սահմանված դրույքաչափից: Օրենքով սահմանված դրույքաչափի հիման վրա շահութահարկի գծով ծախսի համաձայնեցումը իրականի հետ հետևյալն է.

	2025թ.		2024թ.	
	հազ. դրամ	Արդյունավետ հարկային դրույքաչափ %	հազ. դրամ	Արդյունավետ հարկային դրույքաչափ %
(Վնաս) /Շահույթ նախքան շահութահարկով հարկումը	**(640,908)**		**300,382**	
Շահութահարկ՝ հաշվարկված հարկի կիրառելի դրույքաչափով	115,363	18.0%	(54,069)	18.0%
Արտարժույթի տարբերություններից չհարկվող եկամուտ/(չնվազեցվող ծախս)	(108,021)	(17)%	57,024	(19.0)%
Շահութահարկի գծով եկամուտ	**7,342**	**1%**	**2,955**	**(1)%**

Ճանաչված հետաձգված հարկային ակտիվներ և պարտավորություններ

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները վերագրելի են հետևյալ հոդվածներին՝

	Ակտիվներ		Պարտավորություններ		Զուտ	
	2025թ.	2024թ.	2025թ.	2024թ.	2025թ.	2024թ.
Հիմնական միջոցներ	-	-	(57,287)	(16,323)	(57,287)	(16,323)
Տրամադրված փոխառություններ	9,423	3,968	-	-	9,423	3,968
Պաշարներ	-	-	(169)	(2,367)	(169)	(2,367)
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	2,946	2,946	-	-	2,946	2,946
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	659	203	-	-	659	203
Հարկային վնաս	-	927	-	-	-	927
Վարկեր և փոխառություններ	-	-	(38,532)	(41,008)	(38,532)	(41,008)
Տրամադրված երաշխավորության պայմանագրեր	1,631	-	-	-	1,631	-
	13,027	**8,044**	**(95,987)**	**(59,698)**	**(81,329)**	**(51,654)**

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները դեկտեմբերի 31-ի դրությամբ և դրանց շարժը համապատասխան տարիների համար ներկայացված է ստորև.

	2025թ. հունվարի 1-ի դրությամբ	(Հաշվեգրված)/ նվազեցված շահույթի կամ վնասի հաշվին	Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված	2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. Դրամ
Հիմնական միջոցներ	(16,323)	(40,964)	-	(57,287)
Տրամադրված փոխառություններ	3,968	5,455	-	9,423
Պաշարներ	(2,367)	2,198	-	(169)
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	2,946	-	-	2,946
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	203	456	-	659
Հարկային վնաս	927	(927)	-	-
Վարկեր և փոխառություններ	(41,008)	46,493	(44,016)	(38,532)
Ֆինանսական երաշխավորության պայմանագրեր	-	-	1,631	1,631
	(51,654)	12,711	(42,385)	(81,329)

	2024թ. հունվարի 1-ի դրությամբ	(Հաշվեգրված) / նվազեցված շահույթի կամ վնասի հաշվին	Այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված	2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. դրամ	հազ. Դրամ
Հիմնական միջոցներ	-	(16,323)	-	(16,323)
Տրամադրված փոխառություններ	-	3,968	-	3,968
Պաշարներ	-	(2,367)	-	(2,367)
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	-	2,946	-	2,946
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	57	146	-	203
Հարկային վնաս	2,529	(1,602)	-	927
Վարկեր և փոխառություններ	-	16,188	(57,196)	(41,008)
	2,586	**2,956**	**(57,196)**	**(51,654)**

9. Հիմնական միջոցներ

Հազ. դրամ	Շենք շինություններ	Հող	Սարքավորումներ	Տրանսպորտային միջոցներ	Այլ հիմնական միջոցներ	Կառուցման ընթացքում գտնվող	Ընդամենը
Սկզբնական արժեք							
1 հունվարի 2024թ.	**-**	**-**	**-**	**-**	**329**	**271,348**	**271,677**
Ավելացումներ	2,917		698,520	5,419	15,466	7,900,241	**8,622,562**
31 դեկտեմբերի 2024թ.	**2,917**	**-**	**698,520**	**5,419**	**15,794**	**8,171,589**	**8,894,239**
Ավելացումներ	8,743	13,674	43,445	384	445,739	1,260,137	**1,772,122**
Դուրսգրումներ	-				(61)		**(61)**
31 դեկտեմբերի 2025թ.	**11,660**	**13,674**	**741,965**	**5,803**	**461,472**	**9,431,726**	**10,666,300**
Մաշվածություն							
1 հունվարի 2024թ.	**-**	**-**	**-**	**-**	**8**	**-**	**8**
Մաշվածություն	142	-	-	162	410	-	**714**
31 դեկտեմբերի 2024թ.	**142**	**-**	**-**	**162**	**418**	**-**	**722**
Մաշվածություն	508	-	-	706	2,601	-	**3,815**
Դուրգրումներ	-	-	-	-	(61)	-	**(61)**
31 դեկտեմբերի 2025թ.	**650**	**-**	**-**	**868**	**2,958**	**-**	**4,476**
Զուտ հաշվեկշռային արժեք							
31 դեկտեմբերի 2024թ.	**2,775**	**-**	**698,520**	**5,257**	**15,376**	**8,171,589**	**8,893,517**
31 դեկտեմբերի 2025թ.	**11,010**	**13,674**	**741,965**	**4,935**	**458,514**	**9,431,726**	**10,661,824**

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ամբողջությամբ մաշված հիմնական միջոցների արժեքը կազմել է 403 հազար դրամ (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 329 հազար ՀՀ դրամ):

2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության 7,907,387 հազար դրամ հաշվեկշռային արժեքով հիմնական միջոցները գրավադրված են որպես վարկերի ապահովման միջոց (2024թ. 7,607,679 հազար դրամ):

10. Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման համար

31/12/2025 և 31/12/2024 թ-ի դրությամբ առկա տրված կանխավճարների մնացորդը իրենից ներկայացնում է ջերմային էլեկտրակայանի կառուցման գլխավոր կապալառուին՝ «Վալդեկս Էներգետիկա» ՍՊԸ-ին տրված կանխավճարը: Աշխատանքների իրականացման համար 2025 թվականին տրամադրվել է 1,575,849 հազար ՀՀ դրամ կանխավճար (2024 թվականին՝ 401,158 հազար ՀՀ դրամ):

11. Պաշարներ

	31.12.2025թ. հազ. դրամ	31.12.2024թ. հազ. դրամ
Շինանյութ	462,493	98,584
Պահեստամասեր	-	13,927
Վառելիք	218	135
	462,711	**112,646**

12. Տրամադրված փոխառություններ

	31.12.2025թ. հազ. դրամ	31.12.2024թ. հազ. դրամ
Ընթացիկ		
Տրամադրված փոխառություններ	407,651	437,955
Ընդամենը տրամադրված փոխառություններ	**407,651**	**437,955**

Ստորև ներկայացված են տրամադրված փոխառությունների պայմանները:

				2025թ.		2024թ.	
հազ. դրամ	Արժույթ	Անվանական տոկոսադրույք	Մարման ժամկետ	Անվանական Արժեք	Հաշվեկշ. Արժեք	Անվանական Արժեք	Հաշվեկշ Արժեք
Գրավով չապահովված փոխառություններ	ՀՀ դրամ	0%	2026	460,000	407,651	460,000	437,955

Տրամադրված փոխառությունները զեղչվել են 12. 8% տարեկան արդյունավետ տոկոսադրույքով:

13. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր

	31.12.2025թ. հազ. դրամ	31.12.2024թ. հազ. դրամ
Առևտրային դեբիտորական պարտքեր	16,364	16,364
Արժեզրկման պահուստ	(16,364)	(16,364)
Ընդամենը ֆինանսական ակտիվներ՝ բացառությամբ դրամական միջոցների և դրանց համարժեքների	**-**	**-**
Դեբիտորական պարտքեր բյուջեից	531,127	265,318
Այլ դեբիտորական պարտքեր	4,307	13,835
Տրված կանխավճարներ	-	250
Ընդամենը առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	**535,434**	**279,402**

14. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ

	31.12.2025թ. հազ. դրամ	31.12.2024թ. հազ. դրամ
Բանկային հաշիվներ դրամով	11,822	26,353
Բանկային հաշիվներ արտարժույթով	448,426	1,682
Միասնական հաշիվ	1,807	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	**462,055**	**28,035**

15. Սեփական կապիտալ

Կանոնադրական կապիտալ

Կանոնադրական կապիտալն իրենից ներկայացնում է Ընկերության հիմնադիր փաստաթղթերում նշված կապիտալի անվանական գումարը:

Կանոնադրական կապիտալի սեփականատերերն իրավունք ունեն ժամանակ առ ժամանակ ստանալ հայտարարված շահաբաժինները: Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ Ընկերության բաշխման ենթակա պահուստները սահմանափակվում են Ընկերության Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառումը կարգավորող իրավական ակտերին համապատասխան պատրաստված ֆինանսական հաշվետվություններում գրանցված չբաշխված շահույթի մնացորդով:

Հաստատված և ամբողջությամբ վճարված կապիտալը 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմում է 1,650,657 հազար ՀՀ դրամ, որը կազմված է 1000 դրամ անվանական արժեքով սովորական բաժնետոմսերից (2024 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ 1,647,701 հազար ՀՀ դրամ):

2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության 663,050 հազար դրամի չափով բաժնետոմսերը գրավադրված են որպես ներգրավված վարկերի ապահովման միջոց (2024թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 663,050 հազար դրամ):

Շահաբաժիններ

2025 թվականին Ընկերությունը շահաբաժիններ չի հայտարարել և չի վճարել: 2024-ին ևս Ընկերությունը շահաբաժին չէր հայտարարել և չէր վճարել:

Էմիսիոն եկամուտ

Էմիսիոն եկամուտը առաջացել է 2025 և 2024 թվականներին «Հրազդանի էներգետիկ կազմակերպության (ՀրազՋեկ)» ԲԲԸ-ի կողմից Ընկերության կապիտալում ներդրման արդյունքում:

2025 թվականին որպես ներդրված գույք հանդիսացել է ՀՀ, Կոտայքի մարզ, Հրազդան քաղաքի, Գործարանային 1/15 հասցեում գտնվող անշարժ գույքը, որը անկախ գնահատող «ՎԻ ԷՄ-ԱՐ ՓԻ» ՍՊԸ ընկերության կողմից գնահատվել է 64,600,000 ՀՀ դրամ, սակայն հողամասի կադաստրային արժեքը վճարված չէր, ուստի նվազեցված շուկայական արժեքը կազմել է 24,200,000 ՀՀ դրամ, որից 2,956,613

ՀՀ դրամը ներդրվել է Ընկերության կանոնադրական կապիտալում, մնացած տարբերությունը՝ 21,243,387 ՀՀ դրամի չափով, ճանաչվել է էմիսիոն եկամուտ:

2024թվականին որպես ներդրված գույք հանդիսացել է 63000 կՎԱ 110/35/6 հզորության կապի տրանսֆորմատորը (շարժական գույք), որը անկախ գնահատող «ՎԻ ԷՄ-ԱՐ ՓԻ» ՍՊԸ ընկերության կողմից գնահատվել է 119,200,000 ՀՀ դրամ, որից 14,650,707 ՀՀ դրամը ներդրվել է Ընկերության կանոնադրական կապիտալում, մնացած տարբերությունը՝ 104,549,293 ՀՀ դրամի չափով, ճանաչվել է որպես էմիսիոն եկամուտ:

Կապիտալի կառավարում

Ընկերությունը չունի կապիտալի կառավարման ձևակերպված քաղաքականություն, սակայն ղեկավարությունը ձգտում է ապահովել կապիտալի բավարար բազա իր գործառնական և ռազմավարական պահանջները բավարարելու համար: Դա իրագործվում է դրամական միջոցների արդյունավետ կառավարման, Ընկերության հասույթի և շահույթի շարունակական վերահսկման ու հիմնականում Ընկերության գործառնական գործունեության դրամական հոսքերով ֆինանսավորվող երկարաժամկետ ներդրումային ծրագրերի միջոցով: Ձեռնարկելով այդ քայլերը՝ Ընկերությունը նպատակ ունի կայունացնել շահույթի աճը:

Տարվա ընթացում կապիտալի կառավարման նկատմամբ կիրառվող Ընկերության մոտեցումը չի փոփոխվել: Ընկերության կապիտալի նկատմամբ կիրառելի չեն արտաքին մարմինների կողմից սահմանված պահանջները:

Լրացուցիչ կապիտալ

Լրացուցիչ կապիտալը առաջացել է մայր ընկերությունից՝ «Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋեկ)» ԲԲԸ-ից ստացված անտոկոս փոխառությունների անվանական արժեքի զեղչման արդյունքում:

16. Վարկեր և փոխառություններ

Այս ծանոթագրությունում ներկայացված է տեղեկատվություն Ընկերության ամորտիզացված արժեքով չափվող տոկոսակիր վարկերի և փոխառությունների պայմանագրային պայմանների մասին: Տոկոսադրույքի, արտարժույթի և իրացվելիության ռիսկերին Ընկերության ենթարկվածության վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է Ծանոթագրություն 4-ում՝ «Ֆինանսական գործիքներ - ռիսկերի կառավարում»:

	31.12.2025թ. հազ. դրամ	31.12.2024թ. հազ. դրամ
Ոչ ընթացիկ պարտավորություններ		
Գրավով ապահովված վարկեր ԱԿԲԱ Բանկ	8,414,748	4,778,898
	8,414,748	**4,778,898**
Ընթացիկ պարտավորություններ		
Գրավով ապահովված վարկեր ԱԿԲԱ Բանկ	518,879	35,146
Գրավով չապահովված փոխառություններ մայր կազմակերպությունից	2,210,545	2,722,566
	2,729,424	**2,757,712**
	11,144,172	**7,536,610**

					2025թ.		2024թ.	
հազ. դրամ	Արժույթ	Անվանական %	Արդյունավետ տոկոսադրույք	Սպասվող մարման տարի	Անվանական արժեք	Հաշվեկշռային արժեք	Անվանական արժեք	Հաշվեկշռային արժեք
Գրավով ապահովված բանկային վարկ	Եվրո	9.00	9.00	2033	1,039,259	1,039,259	962,687	962,687
Գրավով ապահովված բանկային վարկ	Եվրո	9.50	9.50	2033	444,590	444,590	412,445	412,445
Գրավով ապահովված բանկային վարկ	Եվրո	9.50	9.50	2033	2,820,352	2,820,352	2,613,752	2,613,752
Գրավով ապահովված բանկային վարկ	Եվրո	9.00	9.00	2033	544,374	544,374	504,265	504,265
Գրավով ապահովված բանկային վարկ	Եվրո	9.00	9.00	2033	346,420	346,420	320,896	320,896
Գրավով ապահովված բանկային վարկ	Եվրո	9.00	9.00	2033	1,039,259	1,039,259	-	-
Գրավով ապահովված բանկային վարկ	Եվրո	9.00	9.00	2035	899,790	899,790	-	-
Գրավով ապահովված բանկային վարկ	Եվրո	9.00	9.00	2035	674,844	674,844	-	-
Գրավով ապահովված բանկային վարկ	Եվրո	9.00	9.00	2035	1,124,739	1,124,739	-	-
Գրավով չապահովված փոխառություններ մայր կազմակերպությունից	ՀՀ դրամ	անտոկոս	12.78%	2026	964,411	855,662	1,541,807	1,414,261
Գրավով չապահովված փոխառություններ մայր կազմակերպությունից	ԱՄՆ դոլար	անտոկոս	7.66%	2026	1,354,591	1,258,158	1,408,581	1,308,305
Գրավով չապահովված փոխառություններ մայր կազմակերպությունից	Եվրո	անտոկոս	9.18%	2026	105,607	96,725	-	-
Ընդամենը վարկեր					**11,358,236**	**11,144,172**	**7,764,432**	**7,536,610**

Բանկային վարկերը ապահովված են մայր ընկերության՝ «Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋեկ)» ԲԲԸ-ի կողմից տրամադրված ֆինանսական երաշխավորություններով, բաժնետոմսերի (ծանոթագրություն 15) և ակտիվների գրավադրմամբ (ծանոթագրություն 9):

Ընկերության ենթարկվածությունը պարտքային և արտարժույթի ռիսկերին ներկայացված են Ծանոթագրություն 4-ում՝ «Ֆինանսական գործիքներ - ռիսկերի կառավարում»:

Պարտավորությունների և ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական հոսքերի փոփոխությունների համադրում

	31.12.2025թ. հազ. դրամ	31.12.2024թ. հազ. դրամ
Տարեսկզբի մնացորդ	7,536,610	4,816,648
Փոփոխություններ ֆինանսավորման գործունեությունից առաջացած դրամական հոսքերի հետ կապված	-	-
Մուտքեր վարկերից և փոխառություններից	4,238,467	3,279,552
Վարկերի և փոխառությունների մարում	(1,106,638)	(8,226)
Ընդամենը փոփոխություն ֆինանսավորման գործունեությունից առաջացող դրամական հոսքերի հետ կապված	**3,131,829**	**3,271,326**
Արտարժույթի փոխարժեքի փոփոխության հետևանքներ	482,327	(332,808)
Այլ փոփոխություններ		
Տոկոսային ծախս	488,335	334,530
Շուկայական տոկոսադրույքով զեղչման ազդեցություն ճանաչված լրացուցիչ կապիտալում	(244,535)	(317,755)
Զեղչման ազդեցության հակադարձում	254,449	89,933
Վճարված տոկոսներ	(504,843)	(325,264)
Ընդամենը պարտավորության այլ փոփոխություններ	**(6,594)**	**(218,556)**
Տարեվերջի մնացորդ	**11,144,172**	**7,536,610**

17. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

	31.12.2025թ. հազ. դրամ	31.12.2024թ. հազ. դրամ
Առևտրային կրեդիտորական պարտք	207,379	351,938
Հիմնական միջոցների ձեռքբերումներ	90,210	3,598
Ֆինանսական գործիք պարտավորություն ճանաչված	**297,589**	**355,536**
Կրեդիտորական պարտքեր աշխատավարձի գծով	3,662	1,126
Հարկերի գծով կրեդիտորական պարտքեր	7,220	1,036
	308,471	**357,698**

Ընկերության ենթարկվածությունը պարտքային և արտարժույթի ռիսկերին ներկայացված են Ծանոթագրություն 4-ում՝ «Ֆինանսական գործիքներ - ռիսկերի կառավարում»:

18. Ֆինանսական երաշխավորության պայմանագրեր

Ընկերությունը ֆինանսական երաշխավորության պայմանագրերը հաշվառում է ՖՀՄՍ 9-ի համաձայն: Ստանդարտի համաձայն պայմանագիրը սկզբնապես պետք է չափվի իրական արժեքով, իսկ հետագայում՝ հետևյալներից ավելի բարձրով՝ ՖՀՄՍ 9-ին համապատասխան որոշված կորստի պահուստից և սկզբանապես ճանաչված գումարից՝ հանած, երբ տեղին է, ՖՀՄՍ 15-ի սկզբունքներին համապատասխան ճանաչված եկամտի կուտակային գումարը:

Ընկերության քաղաքականության համաձայն՝ ֆինանսական երաշխավորությունները տրամադրվում են միայն ընդհանուր վերահսկողության ներքո գտնվող կազմակերպությունների պարտավորությունների կատարումը երաշխավորելու համար:

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը երաշխավորել է մայր կազմակերպության բանկային վարկի պայմանագրով նախատեսված պարտականությունների կատարումը: 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ պայմանագրային գումարը և մնացորդը կազմում էր 826,283 հազար ՀՀ դրամ: Պայմանագրի համաձայն երաշխավորողներն անդառնալիորեն և անվերապահորեն՝

- երաշխավորում են բանկի նկատմամբ Վարկային պայմանագրով ստանձնած բոլոր պարտականությունների ժամանակին կատարումը երաշխավորողների կամ փոխառուների կողմից,
- հանձն են առնում, որ եթե փոխառուն չվճարի որևէ գումար պայմանագրով սահմանված ժամկետում կամ դրա հետ կապված, երաշխավորողն անմիջապես ըստ պահանջի կվճարի այդ գումարն այնպես, ինչպես կաներ, եթե այն լիներ հիմնական պարտապանը:

19. Կապակցված կողմերի միջև գործարքներ

Ընկերության վերջնական մայր կազմակերպությունը «Տաշիր Կապիտալ» ՓԲԸ-ն է, վերջնական հսկող անձը՝ պրն. Սամվել Կարապետյանը:

Ընկերության վերջնական մայր կազմակերպությունը չի հրապարակում ֆինանսական հաշվետվություններ:

Գործարքներ կապակցված կողմերի հետ

Հազ. դրամ	Գործարքների գումարը դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար		Մնացորդը առ 31 դեկտեմբեր	
	2025	**2024**	**2025**	**2024**
Ստացված փոխառնություններ				
Մայր կազմակերպություն	632,161	2,437,893	2,210,545	2,722,566
Ապրանքների և ծառայությունների ձեռքբերում				
Մայր կազմակերպություն	152,667	-	30,049	-
Համատեղ հսկողության ներքո գտնվող կազմակերպություններ	250	250	-	250
Տրամադրված երաշխավորություններ				
Մայր կազմակերպություն	9,059	-	9,059	-
Հիմնական միջոցների ձեռբերում				
Մայր կազմակերպություն	24,200	1,296	-	-
Համատեղ հսկողության ներքո գտնվող կազմակերպություններ	-	3,598	-	3,598

Տարվա ընթացքում առանցքային ղեկավար անձնակազմը ստացել է ստորև ներկայացված վարձատրությունը, որը ներառված է «Աշխատակազմի գծով ծախսեր» հոդվածում:

Առանցքային կառավարչական անձնակազմին փոխհատուցումներ

	2025թ. հազ. դրամ	**2024թ. հազ. դրամ**
Աշխատավարձ և այլ հատուցումներ	**4,733**	**2,086**

20. Պայմանական պարտավորություններ

20.1 Ապահովագրություն

Հայաստանի հանրապետությունում ապահովագրական ծառայությունների ոլորտը զարգացման փուլում է, և ապահովագրության շատ տեսակներ, որոնք լայնորեն տարածված են այլ երկրներում, Հայաստանում դեռևս չեն կիրառվում: Ընկերությունը չունի ամբողջական ապահովագրական ծածկույթն իր ակտիվների և գործունեության ընդհատման ռիսկի համար: Քանի դեռ Ընկերությունը համապատասխան ձևով ապահովագրված չէ, գոյություն ունի ռիսկ, որ որոշակի ակտիվների կորուստը

կամ ոչնչացումը կարող է անբարենպաստ նյութական ազդեցություն ունենալ Ընկերության գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

20. 2 Պայմանական պարտավորություններ դատական հայցերի գծով

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև մինչև այս ֆինանսական հաշվետվությունների հաստատման ամսաթիվը Ընկերությունը ներգրավված չէ դատական վարույթներում:

20. 3 Շրջակա միջավայրի հետ կապված խնդիրներ

Ընկերության գործունեությունը կարգավորվում է բազմաթիվ պետական օրենքներով կանոնակարգերով, որոնք կարգավորում են օդը և ջուրն աղտոտող նյութերի արտանետումը, թափոնների արտանետումը, գործածումը և պահպանումը: Ղեկավարությունը գտնում է, որ Ընկերությունը բավարարել է շրջակա միջավայրի պահպանության հետ կապված կառավարության պահանջները, այդ իսկ պատճառով Ընկերությունը պահուստ չի ձևավորել շրջակա միջավայրի պահպանության գծով հնարավոր պարտավորությունների համար, քանի որ ղեկավարութունը հնարավոր չի համարում նման պայմանական պարտավորությունների առաջացումը մոտ ապագայում: Այնուամենայնիվ, բնապահպանության հարցերը կարգավորող ՀՀ օրենսդրությունը զարգացման փուլում է և այդ օրենսդրության և վերջինիս մեկնաբանությունների հնարավոր փոփոխությունները կարող են էական փոփոխությունների հանգեցնել ապագայում:

20. 4 Հարկային ռիսկեր

Հայաստանի հարկային, փոխարժեքային և մաքսային համակարգերը բնորոշվում են օրենսդրության, պաշտոնական հայտարարությունների և դատավճիռների հաճախակի փոփոխություններով, որոնք հաճախ հստակ չեն, հակասական են և տարբեր կերպ են մեկնաբանվում տարբեր հարկային մարմինների կողմից: Հարկերը ենթակա են ստուգման և ուսումնասիրության հարկային մարմինների կողմից, որոնք իրավասու են կիրառել տույժեր և տուգանքներ: Հարկային օրենսդրության խախտման դեպքում հարկային մարմիններն իրավասու չեն սահմանել հարկերի գծով լրացուցիչ պարտավորություններ, տույժեր կամ տուգանքներ, եթե խախտման ամսաթվից անցել է երեք տարի:

Այս հանգամանքները Հայաստանում կարող են այլ երկրների համեմատությամբ ավելի մեծ և էական հարկային ռիսկ առաջացնել: Ղեկավարությունը գտնում է, որ պատշաճ կերպով է գնահատել հարկային պարտավորությունները՝ Հայաստանի գործող հարկային օրենսդրության իր մեկնաբանությունների, պաշտոնական հայտարարությունների և դատավճիռների հիման վրա: Այնուամենայնիվ համապատասխան իրավասու մարմինները կարող են ունենալ այլ մեկնաբանություններ, և հետևանքները կարող են լինել էական այս ֆինանսական հաշվետվությունների համար, եթե իրավասու մարմիններին հաջողվի գործադրել իրենց մեկնաբանությունները:

21. Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր

2026 թվականի հունվարի 30-ին Ընկերությունը գլխավոր կապալառուից ստացել է շինարարության կատարողական ակտ,որի աշխատանքների արժեքը կազմել է 640,336 հազար դրամ:
2026 թվականի մարտի 2-ին Ընկերությունը ներգրավվել է ևս 870,000 Եվրոյին համարժեք 384,870 հազար դրամ կարճաժամկետ վարկ ՀՀ բանկերից:

22. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

Ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականությունները հետևողականորեն կիրառվել են ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բոլոր ժամանակաշրջանների համար:

Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ

Ընկերության ֆունկցիոնալ արժույթը Հայաստանի Հանրապետության ազգային արժույթն է՝ դրամը: Այն հանդիսանում է նաև Ընկերության այս ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը՝ հազարների ճշտությամբ:

Գործարքներ արտարժույթով

Արտարժույթով իրականացված գործարքները փոխարկվում են Դրամի՝ գործարքի օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Որպես փոխարժեք ընդունվում է Հայաստանի Հանրապետության Կենտրոնական բանկի կողմից հրապարակված արժութային շուկայում արտարժույթի նկատմամբ ՀՀ դրամի միջին փոխարժեքը:

Հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները վերագնահատվում են հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ որոշվող դրույքաչափերով: Չմարված դրամային ակտիվների և պարտավորությունների վերագնահատման արդյունքում առաջացող փոխարժեքային տարբերությունները անմիջապես ճանաչվում են շահույթում կամ վնասում:

Ֆինանսական եկամուտ և ծախսեր

***Ընկերության** ֆինանսական եկամուտը և ֆինանսական ծախսը ընդգրկում են.*

- Տոկոսային եկամուտ,
- Տոկոսային ծախս,
- Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հետ կապված փոխարժեքային տարբերություններից առաջացող օգուտը կամ վնասը:

Տոկոսային եկամուտը կամ ծախսը ճանաչվում է՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

Արդյունավետ տոկոսադրույքն այն դրույքն է, որը ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետի համար գնահատված ապագա դրամական վճարումները կամ մուտքերը զեղչվում է ճիշտ մինչև՝

- Ֆինանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեք կամ
- Ֆինանսական պարտավորության ամորտիզացված արժեք:

Փոխարժեքային տարբերությունից առաջացող օգուտը և վնասը ներկայացվում են զուտ հիմունքով որպես ֆինանսական եկամուտ կամ ֆինանսական ծախս կախված այն հանգամանքից, թե որ դիրքում են կատարվում արտարժույթի փոփոխությունները՝ զուտ օգուտի, թե զուտ վնասի:

Ֆինանսական գործիքներ

Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները ճանաչվում են, երբ Ընկերությունը դառնում է ֆինանսական գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվի կամ պարտավորության սկզբնական չափումը տեղի է ունենում իրական արժեքով: Շահույթի կամ վնասի միջոցով իրական արժեքով չափվող ֆինանսական գործիքների խմբում չդասակարգված ֆինանսական ակտիվների կամ պարտավորությունների դեպքում իրական արժեքին գումարվում (կամ հանվում) են գործարքի հետ կապված ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը: Գործարքի գծով ծախսերը, որոնք ուղղակիորեն վերագրելի են «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվների կամ ֆինանսական պարտավորությունների ձեռքբերմանը, անմիջապես ճանաչվում են շահույթում կամ վնասում:

Ֆինանսական ակտիվներ

Ֆինանսական ակտիվները դասակարգվում են հետևյալ կատեգորիաների՝
ա) «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվներ (ԻԱՇԿՎ),
բ) «իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվներ (ԻԱԱՀՖԱ),
գ) ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ:

Դասակարգումը կախված է ֆինանսական ակտիվներից առաջացող դրամական հոսքերի բնույթից և այն բիզնես մոդելից, որի ներքո պահվում և կառավարվում է այդ ակտիվը և որոշվում է սկզբնական ճանաչման պահին:

ա) «Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող».
Ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» այն դեպքում, երբ այն չի դասակարգվում որպես ամորտիզացված արժեքով չափվող (ինչպես նկարագրված է ստորև) և ոչ էլ որպես ԻԱԱՀՖԱ չափվող (ինչպես նկարագրված է ստորև): Բացի այդ, սկզբնական ճանաչման ժամանակ Ընկերությունը կարող է անշրջելիորեն նախորոշել որպես ԻԱՇԿՎ չափվող ցանկացած ֆինանսական ակտիվ, որը բավարարում է ամորտիզացված արժեքով չափվելու կամ ԻԱԱՀՖԱ չափվելու համար ներկայացվող պահանջները, եթե այդպես անելը վերացնում կամ նշանակալիորեն նվազեցնում է հաշվապահական անհամապատասխանությունը, որն այլապես կարող էր առաջանալ:

բ) «իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող» (ԻԱԱՀՖԱ)
Ֆինանսական ակտիվը դասակարգվում է որպես «իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող» (ԻԱԱՀՖԱ), եթե

- այն պահվում է այնպիսի բիզնես մոդելի ներքո, որի նպատակն ապահովվում է ինչպես պայմանագրային դրամական հոսքերը հավաքելով, այնպես էլ ֆինանսական ակտիվները վաճառելով, և
- սկզբնական ճանաչման պահին այն կազմում է Ընկերության կողմից համատեղ կառավարվող որոշակի ֆինանսական գործիքների պորտֆելի մաս և ունի կարճաժամկետ կտրվածքով շահույթի ստացման իրատեսական հնարավորություն, կամ
- դրա պայմանագրային պայմանները սահմանված ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի նկատմամբ տոկոսների վճարումներ են:

գ) «ամորտիզացված արժեքով չափվող»
Ֆինանսական ակտիվը դասակարգվում է որպես «ամորտիզացված արժեքով չափվող», եթե այն բավարարում է հետևյալ երկու պայմաններին և նախորոշված չէ որպես ԻԱՇԿՎ չափվող՝

- այն պահվում է այնպիսի բիզնես մոդելի ներքո, որի նպատակն է պահել ակտիվները պայմանագրային դրամական հոսքերը հավաքելո համար, և
- դրա պայմանագրային պայմանները սահմանված ամսաթվերին առաջացնում են դրամական հոսքեր, որոնք բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի նկատմամբ տոկոսների վճարումներ են:

Ընկերության ֆինանսական ակտիվները, որոնք չափվում են ամորտիզացված արժեքով ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, ներառում են առևտրային դեբիտորական պարտքեր, դրամական միջոցները և դրանց համարժեքները, տրամադրված փոխառությունները, ինչպես նաև այլ ֆինանսական ակտիվները:

Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի գծով կորստի պահուստը միշտ չափվում է ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստների հավասար գումարով:

Երբ ընկերությունը որոշում է, թե արդյոք տեղի է ունեցել ֆինանսական ակտիվի գծով պարտքային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր և երբ գնահատում է ակնկալվող պարտքային կորուստները, այն դիտարկում է ողջամիտ և հիմնավորված տեղեկատվությունը, որը տեղին է և հասանելի առանց անհարկի ծախսումների և ջանքերի: Գնահատումը ներառում է քանակական և որակական տվյալները, Ընկերության անցյալ ժամանակաշրջանների փորձի և պարտքի հիմնավորված գնահատման վրա հիմնված վերլուծությունը և ապագայամետ տեղեկությունը:

Արժեզրկում

Ոչ ածանցյալ ֆինանսական գործիքներ

Ֆիանանսական գործիքներ

Ընկերությունը ճանաչում է կորստի պահուստ ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների ակնկալվող պարտքային կորուստների գծով:

Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի գծով կորստի պահուստը միշտ չափվում է ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստներին հավասար գումարով:

Երբ Ընկերությունը որոշում է, թե արդյոք տեղի է ունեցել ֆինանսական ակտիվի գծով պարտքային ռիսկի նշանակալի աճ սկզբնական ճանաչումից ի վեր և երբ գնահատում է ակնկալվող պարտային կորուստները, այն դիտարկում է ողջամիտ և հիմնավորված տեղեկատվությունը, որը տեղին է և հասանելի առանց անհարկի ծախսումներ և ջանքերի: Գնահատումը ներառում է քանակական և որակական տվյալները, Ընկերության անցյալ ժամանակաշրջանների փորձի և պարտքի հիմնավորված գնահատման վրա հիմնված վերլուծությունը և ապագայամետ տեղեկությունը:

Ընկերությունը ենթադրում է, որ տեղի է ունեցել ֆինանսական ակտիվի գծով պարտքային ռիսկի նշանակալի աճ, եթե այն ավելի քան 30 օր ժամկետանց է:

Ընկերությունը համարում է, որ ֆինանսական ակտիվի գծով տեղի է ունեցել պարտազանցում, եթե

- Հավանական չէ, որ հաճախորդը ամբողջությամբ կկատարի պարտքի հետ կապված իր պարտականություններն Ընկերության նկատմամբ, եթե Ընկերությունը չձեռնարկի այնպիսի գործողություններ, ինչպիսին գրավի իրացումն է (վերջինիս առկայության դեպքում), կամ
- Ֆինանսական ակտիվն ավելի քան 90 օր ժամկետանց է:

Ամբողջ ժամկետում ակնկալվող պարտային կորուստներն այն ակնկալվող պարտային կորուստներն են, որոնք առաջանում են բոլոր հնարավոր պարտազանցման դեպքերից ֆինանսական գործիքի ակնկալվող ժամկետի ընթացքում:

12-ամսյա ակնկալվող պարտային կորուստների գումարն ամբողջ ժամկետում ակնկալվող պարտքային կորուստների մի մասն է, որն իրենից ներկայացնում է այն ակնկալվող պարտքային կորուստները, որոնք առաջանում են ֆինանսական գործիքի գծով հաշվետու ամսաթվից հետո 12-ամսում հնարավոր պարտազանցման դեպքերից (կամ ավելի կարճ ժամկետում, եթե գործիքի ակնկալվող ամբողջ ժամկետը պակաս է 12-ամսից):

Առավելագույն ժամկետը, որը դիտարկվում է ակնկալվող պարտքային կորուստները չափելիս, պայմանագրի առավելագույն ժամկետն է, որի ընթացքում Ընկերությունը ենթարկված է պարտքային ռիսկին:

Ակնկալվող պարտքային կորստի չափում

Ակնկալվող պարտքային կորուստներն իրենցից ներկայացնում են պարտքային կորուստների հավանականությամբ կշռված պարտքային կորուստների գնահատականը: Պարտքային կորուստները չափվում են որպես բոլոր դրամական պակասուրդների ներկա արժեք (պայմանագրին համապատասխան ընկերությանը հասանելիք դրամական հոսքերի և Ընկերության կողմից ակնկալվող սպասվելիք դրամական հոսքերի միջև տարբերությունը):

Անկալվող ֆինանսական կորուստները զեղչվում են ֆինանսական ակտիվի արդյունավետ տոկոսադրույքով:

Պարտքային առումով արժեզրկված ֆինանսական ակտիվներ

Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Ընկերությունը գնահատում է ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանասկան ակտիվները պարտային առումով արժեզրկված լինելու տեսանկյունից: Ֆինանսական ակտիվը պարտքային առումով արժեզրկված է, երբ տեղի են ունեցել մեկ կամ մի քանի դեպքեր որոնք բացասական ազդեցություն ունեն այդ ֆինանսական ակտիվի գնահատված ապագա դրամական հոսքերի վրա:

Ֆինանսական ակտիվի պարտքային առումով արժեզրկված լինելու ապացույցնեից են հետևյալ դեպքերի վերաբերյալ դիտելի տվյալները.

- Փոխառուի կամ թողարկողի նշանակալի ֆինանսական դժվարություններ,
- Պայմանագրի խախտումը, ինչպիսին է պարտազանցումը 90 օր ժամկետանց դառնալը,
- Ընկերության կողմից փոխառության կամ փոխատվության պայմանների այնպիսի վերանայումը, որն ընկերությունը այլ պայմաններում չէր դիտարկի,
- Հավանականությունը, որ փոխառուն կսնանկանա կամ այլ կերպ ֆինանսապես կվերակազմակերպվի:

Ակնկալվող պարտքային կորուստների ներկայացումը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում

Ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվների գծով կորստի պահուստը նվազեցվում է այդ ակտիվների համախառն հաշվեկշռային արժեքից:

Դուրսգրում

Ֆիանանսական ակտիվի համախառն հաշվեկշռային արժեքը դուրս է գրվում, երբ Ընկերությունը չունի ֆինանսական ակտիվն ամբողջությամբ կամ դրա մի մասը փոխհատուցելու հիմնավոր ակնկալիք: Ֆիզիկական անձ հանդիսացող հաճախորդների համար Ընկերությունը կիրառում է համախառն հաշվեկշռային արժեքը դուրս գրելու քաղաքականություն ֆինանսական ակտիվի ավելի քան 180 օր ժամկետանց լինելու դեպքում՝ հիմք ընդունելով նմանատիպ ակտիվների գծով գումարների փոխհատուցման անցյալ ժամանակաշրջանների փորձը: Իրավաբանական անձ հանդիսացող հաճախորդների համար Ընկերությունն իրականացնում է դուրսգրման ժամկետների և գումարի

գնահատում՝ ելնելով փոխհատուցման ողջամիտ ակնկալիքներից: Ընկերությունը չի ակնկալում դուրսգրված գումարների էական փոխհատուցում: Այնուամենայնիվ դուրս գրված ֆինանսական ակտիվները դեռևս կարող են հանդիսանալ կատարողական գործողությունների առարկա՝ հասանելի գումարների փոխհատուցման հետ կապված Ընկերության ընթացակարգերի հետ համապատասխանությունն ապահովելու համար:

Ֆինանսական պարտավորություններ

Ընկերության ֆինանսական պարտավորությունները ներառվում են վարկերը և փոխառությունները և առևտրային կրեդիտորական պարտքերը:

Ընկերությունն իր ֆինանսական պարտավորությունները դասակարգում է որպես «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» կամ «ամորտիզացված արժեքով չափով»՝կախված պարտավորության ստանձնման նպատակից:

Ընկերությունը չունի «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» որևէ ֆինանսական պարտավորություն:

Ստորև ներկայացված է Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականությունը որպես «ամորտիզացված արժեքով չափվող» դասակարգված ֆինանսական պարտավորությունների համար:

Վարկերը և փոխառությունները սկզբնապես ճանաչում են իրական արժեքով՝ առանց գործարքային ծախսերի: Սկզբնական ճանաչումից հետո վարկերը և փոխառությունները չափվում են ամորտիզացված արժեքով, իսկ այս արժեքի և մարման արժեքի միջև տարբերությունը փոխառության ժամկետի ընթացքում ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ արդյունավետ տոկոսադրույքի մեթոդով: Տոկոսավճարները և փոխառությունների հետ կապված այլ ծախսերը ծախսագրվում են կատարմանը զուգահեռ՝ որպես ֆինանսական ծախսերի մի մաս, բացի որակավորվող ակտիվի ձեռքբերմանը, կառուցմանը կամ արտադրությանն ուղղակիորեն վերագրվող փոխառության ծախսումներից, որոնք կապիտալացվում են որպես այդ ակտիվի արժեքի մաս:

Առևտրային կրեդիտորական պարտքերը ճանաչվում են իրական արժեքով, հետագայում չափվում են ամորտիզացիոն արժեքով:

Հիմնական միջոցներ

Հիմնական միջոցները ենթակա են վերագնահատման կանոնավոր հիմունքով: Վերագնահատման հաճախականությունը կախված է վերագնահատման ենթակա հիմնական միջոցների իրական արժեքների փոփոխություններից: Եթե հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքը վերագնահատման հետևանքով աճում է, աճը ճանաչվում է որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունք: Սակայն եթե այդ աճը վերականգնում է նույն հիմնական միջոցի շահույթում կամ վնասում ճանաչված նախկին վերագնահատումների արդյունքում առաջացած նվազումը, ապա այն ճանաչվում է շահույթում կամ վնասում: Եթե հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքը վերագնահատման հետևանքով նվազում է, նվազումը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Սակայն եթե այդ նվազումը վերականգնում է նույն հիմնական միջոցի ուղղակիորեն սեփական կապիտալում որպես այլ համապարփակ ֆինանսական արդյունք ճանաչված նախկին վերագնահատումների արդյունքում առաջացած աճը, ապա այն ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքի կազմում:

Ընկերությունը կառուցման փուլում է և դեռևս հիմնական միջոցների վերագնահատում չի իրականացրել:

Հետագա ծախսումներ

Հիմնական միջոցների բաղկացուցչի փոխարինման ծախսերը ճանաչվում են միավորի հաշվեկշռային արժեքում, երբ հավանական է, որ Ընկերություն կհոսեն այդ միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները, և դրա արժեքը հնարավոր է արժանահավատորեն չափել:Փոպարինվող բաղկացուցչի հաշվեկշռային արժեքն ապաճանաչվում է: Հիմնական միջոցների ամենօրյա սպասարկման ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում առաջանալուն պես:

Մաշվածություն

Հիմնական միջոցների միավորների մաշվածության հաշվարկը սկսվում է դրանց տեղադրման և շահագործմանը պատրաստ լինելու պահից, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեպքում՝ վերջիններիս կառուցումն ավարտելու և շահագործմանը պատրաստ լինելու պահից: Մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի սկզբնական արժեքի հիման վրա՝ հանած դրա մնացորդային արժեքը:

Մաշվածությունը որպես կանոն ճանաչվում է շահույթում կամ վնասում գծային մեթոդով հիմնական միջոցների յուրաքանչյուր մասի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, քանի որ այս մեթոդն առավել ճիշտ է արտացոլում ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտների ստացման մոդելը: Հողատարածքի գծով մաշվածություն չի հաշվարկվում:

Ընկերության կողմից ճանաչված հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետը ներկայացված է ստորև.

Հիմնական միջոցներ	Օգտակար ծառայության ժամկետ
Շենք,շինություններ	20 տարի
Սարքավորումներ	10 տարի
Տրանսպորտային միջոցներ	8 տարի
Այլ հիմնական միջոցներ	1-8 տարի

Մաշվածության հաշվարկի մեթոդները, օգտակար ծառայության ժամկետները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և անհրաժեշտության դեպքում՝ ճշգրտվում:

Փոխառության ծախսումներ

Փոխառության ծախսումները, որոնք անմիջականորեն վերագրելի են որակավորվող ակտիվի ձեռքբերմանը, կառուցմանը կամ արտադրությանը, Ընկերության կողմից կապիտալացվում են որպես այդ արժեքի մաս: Ընկերությունն այլ փոխառության ծախսումներն ճանաչում է որպես ծախս այն ժամանակաշրջանում, որի ընթացքում դրանք կատարվել են:

Պաշարներ

Պաշարները հաշվառվում են ինքնարժեքի և հնարավոր իրացման զուտ արժեքի նվազագույնով:

Պաշարների ինքնարժեքը հաշվառվում է՝ օգտագործելով առաջին մուտք-առաջին ելք (ԱՄԱԵ) և ներառում է ձեռքբերման ծախսումները և պաշարները ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված այլ ծախսումներ:

Արժեզրկում

Ընկերության հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների հաշվեկշռային արժեքը վերանայվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ, որոշելու՝ արդյոք առկա՞ է որևէ հայտանիշ, ըստ որի ակտիվը կարող է արժեզրկված լինել: Եթե որևէ այդպիսի հայտանիշ առկա է, ապա գնահատվում են այդ ակտիվի (կամ ակտիվների խմբի) փոխհատուցվող գումարները և համեմատվում հաշվեկշռային արժեքի հետ: Եթե գնահատված փոխհատուցվող գումարը փոքր է, ապա հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև գնահատված փոխհատուցվող գումարը, և արժեզրկումից կորուստները ճանաչվում են անմիջապես շահույթում կամ վնասում:

Նմանապես, յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ գնահատվում է պաշարների արժեզրկված լինելը՝ պաշարի յուրաքանչյուր հոդվածի (կամ միանման պաշարների խմբի) հաշվեկշռային արժեքը դրա վաճառքի գնի՝ հանած համալրման և վաճառքի ծախսումները, հետ համեմատելու միջոցով: Եթե պաշարի հոդվածը (կամ միանման պաշարների խումբը) արժեզրկվել է, դրա հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև վաճառքի գին՝ հանած համալրման և վաճառքի ծախսումները, իսկ արժեզրկումից կորուստը ճանաչվում է անմիջապես շահույթում կամ վնասում:

Եթե արժեզրկումից կորուստը հետագայում հակադարձվում է, ակտիվի (կամ ակտիվների խմբի) հաշվեկշռային արժեքը ավելացվում է մինչև դրա փոխհատուցվող գումարի վերանայված գնահատականը (պաշարների դեպքում, վաճառքի գին՝ հանած համալրման և վաճառքի ծախսումներ), սակայն ոչ ավելի, քան այն գումարը, որը կորոշվեր, եթե նախորդ տարիներին ակտիվի (կամ ակտիվների խմբի) գծով ոչ մի արժեզրկումից կորուստ ճանաչված չլիներ: Արժեզրկումից կորստի հակադարձումը ճանաչվում է անմիջապես շահույթում կամ վնասում:

Պահուստներ

Պահուստը ճանաչվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում, երբ Ընկերությունն ունի իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և եթե հավանական է, որ պարտականությունը մարելու նպատակով կպահանջվի տնտեսական օգուտների արտահոսք: Եթե դրա ազդեցությունը զգալի է, ապա պահուստը որոշվում է ապագա դրամական արտահոսքերի զեղչման միջոցով՝ օգտագործելով մինչև հարկումը տոկոսադրույքը, որն արտացոլում է դրամի ժամանակային արժեքի վերաբերյալ շուկայի ընթացիկ գնահատումները և կիրառելիության դեպքում պարտավորությանը վերագրվող յուրահատուկ ռիսկերը:

Տրամադրված ֆինանսական երաշխավորություններ

Տրամադրված ֆինանսական երաշխավորության գծով պարտավորությունը Ընկերությունը սկզբնական ճանաչում է երաշխավորության իրական արժեքով և հետագայում չափում է ՖՀՄՍ 9-ի համաձայն որոշված կորստի պահուստի գումարից և սկզբնապես ճանաչված գումարի ու, կիրառելի լինելու դեպքում, ՖՀՄՍ 15-ի համաձայն ճանաչված եկամտի կուտակային գումարի տարբերությունից առավելագույնով:

Երբ ընկերությունը տրամադրում է ֆինանսական երաշխավորություն կապակցված կողմին նույնիսկ առանց հատուցման, համարվում է, որ մայր կազմակերպությունը գործում է բաժնետիրոջ կարգավիճակով և ֆինանսական երաշխավության տրամադրումը ճանաչվում է որպես կապիտալի բաշխում:

Հետաձգված հարկեր

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները ճանաչվում են, երբ ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչված ակտիվների կամ պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և դրանց համապատասխան հարկային բազաների միջև առկա են տարբերություններ:

Հետաձգված հարկային ակտիվների ճանաչումը սահմանափակվում է այն դեպքում, երբ հավանական է, որ կառաջանա հարկվող շահույթ, որի դիմաց ժամանակավոր տարբերությունները հնարավոր կլինի օգտագործել:

Հետաձգված հարկային ակտիվները կամ պարտավորությունները չափում են՝ կիրառելով հարկային դրույքաչափերը, որոնք ուժի մեջ են եղել կամ ըստ էության ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ, և ակնկալվում է, որ կկիրառվեն, երբ հետաձգված հարկային պարտավորությունները/(ակտիվները) կմարվեն/(կփոխհատուցվեն):

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են, եթե կա ընթացիկ հարկային ակտիվներն ու պարտավորությունները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք, և հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները վերաբերում են հարկերին, որոնք գանձվում են նույն հարկային մարմնի կողմից:

Հավելված Ա - ՖՀՄՍ 13 Իրական արժեքի չափման բացահայտումներ

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է այն ակտիվները և պարտավորությունները, որոնց իրական արժեքները բացահայտվել են ծանոթագրություններում.

Հոդված	Իրական արժեք Հազար ՀՀ դրամ	Գնահատման մեթոդ	Իրական արժեքի հիերարխիայի մակարդակ	Նշանակալի ոչ դիտարկելի ելակետային տվյալներ
Տրամադրված փոխառություններ	407,651	Տրամադրված փոխառությունների հաշվեկշռային արժեքը մոտ է իրական արժեքին	Մակարդակ 3	Կիրառելի չէ
Վարկեր և փոխառություն-ներ	11,144,172	Վարկերի և փոխառությունների հաշվեկշռային արժեքը մոտ է իրական արժեքին:	Մակարդակ 3	Կիրառելի չէ
Առևտրային կրեդիտորական պարտքեր	297,589	Կարճաժամկետ (12 ամսից պակաս) կրեդիտորական պարտքերի հաշվեկշռային արժեքը մոտ է իրական արժեքին:	Մակարդակ 3	Կիրառելի չէ
Տրամադրված ֆինանսական երաշխավորություններ	9,059	Գնահատվել է ակնկալվող վարկային կորուստների մեթոդաբանության հիման վրա, և հաշվեկշռային արժեքը մոտ է իրական արժեքին:	Մակարդակ 3	Կիրառելի չէ